

ԱՐԵԱՆԳՄԱՐ ԵՒ ԳԱՄԱՐ ԱՐԻՍՆԻԹԻՒՆ

(Ցեսութիւն հայ սովորութական իրաւունքից)

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

Ամուսնութիւնը շատ հին ժամանակում կատարւում էր կամ առեանգմամբ կամ զնմամբ։ Սակայն դեռ ևս իրաւագիտական աշխարհում որոշուած չէ, թէ ամուսնութեան սոյն երկու եղանակներն ինչ կարգով են գոյութիւն ունեցել։ Արդեմք սկզբում զարգացել է առեանգումն և ապա սրան յաջորդել զնումը, թէ երկուսն էլ միաժամանակ իրեւ ամուսնութեան միակ միջոց համազօր գոյութիւն են ունեցել ժողովրդական կետնքում։

Մարդկութեան հասարակական կեանքի արշալուախն ընտանիքը միանգամայն զուրկ է եղել այն անհատական բնաւորութիւնից, որ ժամանակակից ընտանեկան կազմի յատուկ զիծն է։ Նախապատմական այդ ընտանիքները բաղկացած են եղել խմբակներից, որոնք կազմել են սերունդներ, տոնմեր, ցեղեր, և հիմնուած են եղել մայրիշխանութեան սկզբունքի վրայ։ Սերնդական խմբերը համայնօրէն են տիրել իրանց կանանց և ունեցել են ազատ սեռական յարաբերութիւնը։ Այսպիսի պայմաններում ամուսնական կատերի տեսդականութեան մասին, ի հարկէ, խօսք անդամ չի կարող լինել, և հետեաբար պաւակների ու ծնող-հայրերի միջև անհնարին էր որոշ իրական յարաբերութիւն հաստատելու հետեապէս և միայն մայրը կարող էր ճանա-

չուել իրքեւ գաւակից միակ տէրը, ինչպէս և ճանաչուել է. ուստի և վերջինս պատկանել է բացառապէս այն ցեղին կամ այն սերնդին, որին պատկանում էր նրա մայրը, Այս տեսակ պայմաններում սերուած մարդկային խմբակցութիւնների մէջ ազգակցութիւնը տիրապետում էր լոկ մայրական գծով. Սերունդն անում էր ու գարգանում կանանց չորրին, որոնք այսպիսով գանձում էին խմբական կեանքի մի տեսակ կենդրօն:

Բայց և այնպէս խմբական ամուսնութեան այդ յարարերութիւններին դրուած էր որոշ սահմանափակում, որ ինչպէս ցոյց են տալիս պատմական ու մանաւանդ ժամանակակից ազգագրական փաստերը, պահպանուում էր խստօրէն. դա այդպէս անուանած այլացեղ (Էքսոզամի) ամուսնութեան սովորութիւնն էր: Այդ սահմանափակումն արտայայտում էր նորանով, որ մի սոցիալական խօրի անդամները, մի սերնդի պատկանող տարրերը՝ այր և կին, իրաւունք չունեին միմեռնց հետ գուզաւորուելու, այլ մի խօրի կանայքը պէտք է գուզաւորուէին մի ուրիշ խօրի արանց հետ և ընդհակառակին: Ուրեմն որոշ խօրի կամ սերնդի իւրաքանչիւր տղամարդը գանձում էր մի տեսակ ամուսին արտաքին, մի օտար խօրի ամեն մի կնոջ համար: Այսուղից կարելի է եզրակացնել, որ ամուսնութիւնը գոյութիւն ունէր ոչ թէ առանձին անհատների, այլ ամբողջ որոշ խօրերի միջև: Այս տեսակ խմբական ամուսնութեան վրայ էր կառուցանուում այլացեղ ընտանիքի հիմքը, առաջանում մեսյրիշխանութիւնը, ընտանեկան այն հիմնարկութիւնը, որն ընտանիքի գարգացման պատմութեան մէջ մեզ յայտնի ամենահին աստիճանն է: Ահա այդ այլացեղ ամուսնութեան սովորութեան չորրինքը նարաւոր էր միայն առևանգմամբ, մանաւանդ եթէ ՚ի նկատի առնէինք, որ ննումը գանազան սերունդներն ու ցեղերը մեծ մասամբ միմեանց հետ թշնամական յարաբերութեան մէջ էին գտնւում:

Ժամանակի ընթացքում մայրիշխանութիւնը ենթար-

կուելով էզօլիւցինի զարդացմանը, քայլայւում է, վերափոխուելով ընտանեկան կազմի նոր ձևերին, որոնք աւելի մօս են ու նման ժամանակակից ընտանեկան դրութեանը։ Այստեղ զարգանում է ամուսնական յարաբերութիւնների ամողութիւնը, ուրեմն և հօր անձնաւորութեան մշտական ներկայութիւնը։ Սմուսինն, իրքն կնոջ ապաւէն, և միենոյն ժամանակ իրքն հայր, օժտուած որոշ իրաւունքներով իւր որդիների վերաբերմամբ, աստիճանաբար առաջ է բերում հայրիշխանութեան, նահապետական գերգաստանի գաղափարը։ Սակայն այդ մայրիշխանութեան լուծմամբ բնաւ չի վերանում նրան կցորդ այլացեղ ամուսնութեան սկզբունքը։ Այլացեղ ամուսնութեան սահմանափակման ոյժը տակաւին որոշ չափով շարունակում է պահպանուել զանազան սերունդների յարաբերութիւնների մէջ։ Ակներեւ է, որ առեանգումն ևս, որպէս այլացեղ ամուսնութեան կցորդ մի կարգ, մոռմ է իրքն կին ձեռք բերելու միակ միջոց։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ մայրիշխանութեան ու այլացեղ ամուսնութեան վերջին նշոյներն անհետացել եին իրականութեան մէջ, առեանգումը շարունակել է իւր զոյութիւնը ամուսնական իրաւունքի մէջ, որպէս մի սովորութական երևոյթ։ Յետապայում առեանգումը դառնել է արդէն մի տեսակ մոռած ձևականութիւն, որ արտայայտում է հարսանիքի ու պատակազորութեան ժամանակ յատուկ սիմբօլիական գործողութիւնների մէջ։

Արդ զառնանք բուն նիւթին և առաջ բերենք այն փաստերը, որոնք կը ծառայեն մեզ իրքն ապացոյց, թէ հայկական կեանքումն էլ առեանգումը դոյութիւն է ունեցել որպէս մի իրական երևոյթ։

II.

Սովոր Խորենացին պատմելով Ալանների արշաւանքը հայոց վրայ, յիշատակում է, որ Արտաշէս Բ., տեսնելով Ալանների գեղեցիկ իշխանագնունուն, սիրեց նրան ու

կամեցաւ կնութեան առնել բայց երբ մերժումն ստացաւ՝ սրոշեց բանի ոյժի զիմել, Այսաեղ Մովսէս Խորենացին յիշատակում է ժողովրդական վիպասանութիւնից մի հատուած, ուր նկարագրում է այդ առևանգման պատկերը:

Հեծաւ քաջ թագաւոր Արտաշէոր գեղեցիկ սև ձին,
Եւ հանեց ոսկէ օղով կարմիր կաշէ պարանը,
Եւ անցաւ ինչպէս սրաթե արծիւ գետի միջով,
Եւ հանեց ոսկէ օղով կարմիր կաշէ պարանը,
Զգեց Արանների օրիորդի մէջքին,
Եւ շատ ցաւեցրեց փափուկ օրիորդի մէջքը,
Արագ հասցնելով նրան իւր բանակը *),

Մի կողմը թողնելով այս հատուածի մասին Մովսէս Խորենացու առւած անձնական բացազութիւնը, մենք իրաւունք ունենք բառացի հասկանալ վերոյիշեալ նկարագրութիւնը: Եթէ ժողովրդական վիպասանները մինչև իսկ երեակայական ու լեզենդար դէպք են պատմում այդ հատուածում, այնուամենայնիւ պէտք է ՚ի նկատի առնենք, որ վիպասանութիւնների մէջ նկարագրած պատկերները միշտ համապատասխան են լինում ժողովրդի կենցազի պայմաններին, նրա աշխարհայեացքի աստիճաններին: Ուստի այս դէպքումն էլ, եթէ ժողովրդական կեանքում կենդանի չլինէր առևանգման սովորոյթը, կամ եթէ այդ սովորոյթն այդտեղ դատապարտելի լինէր, երբէք վիպասանները մի բանաստեղծական երգ չէին հիւսիլ իրենց հերոսացրած թագաւորի ամուսնութեան մասին. Թագաւորի, որ առևանգմանք է կին առնում: Ընդհակառակն շատ հաւանական է, որ ժողովրդի կեանքում տեղի էր ունենում առևանգումն և այն էլ, ինչպէս ենթադրում ենք, շատ զարգացած չափով: Դրան ապացոյց են մի շարք արգելական ու պատժական կանոնները, որոնք սահմանուել են հայկական օրէնսդրութեան մէջ և որոնք դարերի ընթաց-

*) Մովսէս Խորենացու՝ հայոց պատմ. գիրք Բ, գլ. Ծ. աշխարհ. թարգմ. Խորէն ծ. վ. Ստեփանէի:

քում շարունակ կրինուել են, Այդ տեսակ արգելական օրէնքներ կարող էին երևան դալ միմիայն այն ժամանակ, երբ իրականութեան մէջ գոյութիւն են ունենում արգելում առաջացնող պայմաններ։ Օրէնսպրութեան խփառ որոշումներն ու նրա դարձոր գործադրութիւնը գրաւական են, թէ ժողովրդի մէջ ինչպիսի մեծ ծաւալով էր արմատացած առևանդումն և Բնչպիսի գժուարին մարտաման ու հալածանքի էր ենթարկուած նու վարչական մարմինների կողմէց։

Քրիստոնէութիւնը, մուտք գործելով Հայաստան, սկզբանց հալածել այն ամենն, ինչ յիշեցնում էր հեթանոսութեան զազափարը։ Այդ հակաբրիստոնէական ոգու շարքն էր զասուելու անշուշտ և առևանդման սովորութիւնը։ Եւ ահա հենց առաջի քայլում, երբ առիթ է լինում յատուկ կանոններ մշակելու և օրէնտղրական ոյժ տալ նրանց, յօրինում է ՚ի միջի այլոց նաև առևանդման վերաբերեալ մի կանոն։ Գրիգոր Լուսաւորչի նախաձեռնութեամբ Վաղարշապատում գումարուած եկեղեցական ժողովը (325թ.) սահմանում է 9-րդ կանոնը, որ ասում է. «Եթէ ոք տոււանդ արասցէ, պասին այն յաւեր եղիցի, և պատկեան ում կամի՝ լիցի *): Մօտաւորապէս մի դար յետոյ կայանում է Շահապիվանի ժողովը (447թ.), որտեղ մշակում են նոր կանոններ, որոնցից 7-րդն առևանդման հարցին է վերաբերում։ որք բռնութեամբ և անիրաւութեամբ առեւանդ առնիցեն, կալցեն զկինն և անդրէն տացեն ցհայր և ցմայր, և տուգան տացեն փոխանակ անարգանացն, եթէ ազատ է՝ ՌՄ (1200) դրամ, եթէ շինական է Ռվ. (600) դրամ։ Եւ որ հրոսն երթեալ էին օգնականնք սուտ փեսային՝ առ այրն Ճ (100) դրամ տուգանիցեն և զհրոսին դրամն զկէն յեկեղեցին տայցեն և զկէն կարօտելոց։ Ապա եթէ սուտ փեսայն ընդ աղջկանն պոռնկեցաւ առանց պատկ զնելոյ՝ յեկեղեցի տուգան կալցին Ճ (100) դրամ,

* Արէլ եղու. Միթարեան՝ «Պատմութիւն ժողովոց հայատանեայց եկեղեցւոյ», եր. 20.

զիւ պատկն օրհնութեան անարգեաց. Գ (3) ամս յապաշ-խարութեան կացցէ. Ապա եթէ երիցու ուրուք դադա պատկ եղեալ իցէ առանց հօր ու մօր աղջկանն, երէցն դրահանայութիւն շիշխէ պաշտել, և Ճ (100) դրամ տու- դանս կացին և կարօտելոց տացեն. և պատկն զոր եդ՝ անվաերը լիցի. Ապա եթէ յետ այսր խոսվութեան և տուգանաց դարձեալ 'ի հաւանութիւն գան կամօք աղջր- կանն և ծնողացն, և յառաջ պոռնկեալ են, պատկ մի՛ օրհ- նեցի, այլ իբրև զերկակին ուռ տեսանազրեալ դիցի 'ի դուժի. առա եթէ կուսան կացեալ են, ըստ օրինին պատկ օրհնեցի. Եթէ ադաս և թէ շինական-կանոն այդ կացցէ¹⁾.

Այսպիսի կանոններ յօրինում են նաև յետազայ ժողովներում և մենք նկատում ենք, որ XII-րդ դարում ևս առեանզումը բաւականին խորն էր արմատացել ժողովրդի կեանքում, քանի որ մի կողմից՝ Մխիթար Գօշն է Հայաս- տանի մի ժայրում և միւս կողմից՝ Ներսէս Շնորհալին միւս ժայրում՝ Կիլիկիայում, զբեթէ միաժամանակ, սակայն իրարից անկախ յիշատակում են դրա մասին.

Մխիթար Գօշն իւր Դատաստանազրեփի մէջ մտցնում է Յ կանոն առեանզման գէմ. Սոցանից մէկը՝ ԼՂ յօդուածը (մասն Ա.), որի մի մասը վերցրած է «Հարցն հետեղաց» ժե կանոնից, 'ի միջի այլոց ասում է. «Զառեանկն, թէն որդիս ծնցի և հայր և մայր և աղջիկն չկամիցին մի՛ ինչ մնաս կրեսցէ 'ի չարազագան հոգւոյն, անդրէն դարձու- ցանել»²⁾: Երկրորդը՝ ԺԱ յօդուածը, որ նիւթ է առել նշանուած աղջկայ առեանզման գէպը, իրեն հիմք է ու- նեցել Անկիւրիայի ժողովի ժբ կանոնը. Այդ ՇԱ յօդուա- ծով հրամայում է առեանզուած նշանուած աղջիկը յետ վերցնել, մինչեւ անզամ եթէ բռնութեամբ ապաստանուած լինի. «Որք միանգամ խօսեալ աղջկունք են և զուգեալ

¹⁾ Արէլ եպս. Մխիթարեան «Պատմ. ժողով. Հայտատանեայց եկեղ.» եր. 63.

²⁾ Մխ. Գօշի՝ Դատաստանազիրք հայոց, հրատ. Վահան վ. Բաստամեանի. եր. 129.

գաւանիցին, և յետ այսորիկ այլք յափշտակեսցեն, կամ եղի զի անդրէն առացեն որում խօսեալն էր. թէն 'ի բռնութիւն ապաստանիցէ. մի՛ թողցեն, Մի զզուգեալն և զիօնեալն համարի և անդրէն դարձուցանել, թէն պսակիցի ընդ յափշտակովին¹⁾, Վերջապէս երրորդ, այն է Դժ յօդուածն ամբողջովին առնուած է Շահապիվանի ժողովի մեր յիշած 7-րդ կանոնից ինչ ինչ յաւելումներով. Այն վերջին յօդուածին Միհիթար Գօշը մեծ նշանակութիւն է տալիս, առաջարկելով գատաւորներին ու եպիսկոպոսներին ուշադրութեան առնել այդ օրէնքն և ըստ այնմ էլ վարուիլ խիստ հետեւողութեամբ:

Ներսէս Շնորհալին իւր Շնորհանրականին մէջ 'ի միջի այլոց գատապարտում է, և խատիւ արգելում առեւանգման սովորութիւնը: «Մի և այնոցիկ՝ որք առևանգուասին, զնիցէ պսակ, զի հակառակ օրինաց Աստուծոյ Է և բիւրք չարեաց պատճառք 'ի սատանայէ շարժեալք 'ի մոլեկան ախտուա²⁾»:

Նմանապէս վրաց թագաւոր Վախթանգի Դատաստանագրքի մէջ «Հայկական օրէնքներ» վերտառութեամբ յայտնի բաժնում գտնում ենք 62-րդ յօդուածը, որ վերցրած է «Ասորահռովմէական օրինագրքից» և որը վերաբերում է առևանգութեան. «կոյս աղջկան առևանգողը պէտք է մահուան պատժի ենթարկուի: Եթէ երիտասարդը ոչ մի յարաբերութիւն չի ունեցել աղջկայ հետ և փախցել է նրան փոխադարձ համաձայնութեամբ, այն ժամանակ առևանգողը պատժւում է իրրև զնացող»³⁾:

¹⁾ Միհիթար Գօշի Դատաստանագիրք հայոց՝ հրատ. Վ. գ. Բաստամեանի, եր. 151.

²⁾ Թուղթ ընդհանրական՝ Ներսէս Շնորհալու. Ս. էջմիածին, 1865 թ. եր. 83.

³⁾ Оборникъ законовъ грузинск. царя Вахтанга II. Изд. О. С. Френкеля, стр. 246.

III.

Վերև յիշուած փաստերը բաւական են ապացուցանելու, թէ մեր սուրբ հայրերն ինչ եռանգով էին կռւում ժողովրդական այն սովորութիւնների դէմ, որոնք հեթանոսական ժամանակից ՚ի վեր մնում էին, մանաւանդ աղդաբնակութեան ստորին խաւերում, իբրև ամումնութեան մի անհրաժեշտ միջոց։ Անտարակոյս՝ գարերի ընթացքում գործադրած խիստ պատժական միջոցները մի կողմից և քրիստոնէական ոգու տակ մնուած բարքերը միւս կողմից, քայլ առ քայլ պէտք է նուռագեցնէին առևանգման սովորութիւնները։ Յիրաւի՛ կարծես սուրբ հայրերը մասամբ հասել էին իրենց նպատակին։ Առևանգումն, իբրև ամումնութեան անհրաժեշտ մի եղանակ, միանգամայն վերացաւ հայկական սովորութական իրաւունքից։ ատկայն նրա հետքերը գեռես չեն չքացել, կարծես այդ հին սովորութիւններբն այս ու այնտեղ, որպէս բնազդային ոյժ յարութիւն է առնում ժողովրդի բարքերի մէջ ու յիշեցնել է տալիս հարս զրաւերու այն դիւրին։ բայց և համարձակ միջոցը, որ չիպիթ ու անվեհեր պատանիների գործ կարող էր լինել։ Դեռ ևս XIX դարու վերջերում զտնում ենք հայ ժողովրդի բարքերում առևանգման հատ հատ դէպքեր, որոնք թէն այլու չեն կարող մեզ իբրև փաստ ծառայել, որ այսօր էլ առևանգումն իրականապէս կազմում է սովորութական իրաւունքի կարգերից մէկը, բայց և այնպէս՝ ապացուցանում են, որ այդ բնազդը միանգամայն արմատախիլ չի եղել ժողովրդի կեանքից։ Առաջ բերենք մի քանի փաստեր։

ՀՀարս փախցնելու սովորութիւնը գեռ ևս գոյութիւն ունի Ախալցիայի գաւառի հայերի մէջ։ սակայն այդ չի կարելի համարել իբրև տեղական կեանքի ստէալ կրկնուող մի երեսյթ։ Առևանգումն՝ աղջկայ կամքին հակառակ՝ զրեթէ բնաւ տեղի չի ունենում, այլ սովորաբար առևանգուողը խօսք է կապում իւր փախցնողի հետ։ Առևանգման

շարժառիթը մեծ մասամբ լինում է ծնողների անհամա-
ձայնութիւնն աղջկայ ամուսնութեան հարցում: Երբեմ
էլ պատահում է, որ այդ շարժառիթը—աղջկայ հօր ան-
համաձայնութիւնն է լինում. այս գէպքում աղջկայ մայրը
դառնում է առևանգման մասնակից, երիտասարդը նախո-
րօք պայմանաւորուելով փախուստի վերաբերմամբ աղջկայ
հետ, ստանում է սրանից մատանի կամ մի որեւէ թանգա-
ղին բան իրըև գրաւական: Առևանգողը գալիս է իւր ըն-
կերներով (մօսաւորապէս 10 հոգի), բոլորը զինուած:
Մօտենարով աղջկայ տանը և յարմար ժամանակ ընտրելով,
յարձակումն է գործում երթիկից ի վայր, յափշտակում
աղջկան և հեծնելով ձին, փախչում է ընկերների օջնու-
թեամբ: Առևանգողը փախցնում է աղջկան սովորաբար
որեւէ հարևան զիւղ, իւր ընկերոջ մօտ և այնտեղ զիշերը
պարկում նրա հետո Այնուհետև երիտասարդն ու աղջիկը
շտապում են ծածկել իրենց վարմունքը եկեղեցական պր-
սակով, որ տեղի է ունենում 2—3 օրից յետոյ, ամենաուշ
մի շարաթից յետոյ, եթէ ի հարկէ եկեղեցու կողմից ոչ մի
արգելք չի լինում: Հակառակ գէպքում նոքա ապրում են
ապօքինի կենացութեամբք¹⁾:

Ախալքարաքի զաւառում զեռ ևս պահպանուում է աղ-
ջիկ փախցնելու սովորութիւնն և սրա զիխաւոր շարժա-
ռիթը համարւում է շնադեմասինք²⁾:

Վարանդայում շղեռ մինչև այսօր էլ յաճախ պատահում
է, երբ մի երիտասարդի մերժում են տալ իւր սիրած աղ-
ջիկը, որի պատճառը սովորաբար երիտասարդի ստոր գեր-
դաստանից, կամ աղքատ լինելն է լինում, վերջինս հաւա-
քելով իւր մի քանի մտերիմ ընկերները՝ փախցնում է աղջ-
կան: Շատ անգամ առնելով աղջկայ համաձայնութիւնը, և
ժամանիք լինելով նրա հետ, երիտասարդը ձիու գաւակն է

¹⁾ „Этнографическое Обозрение“ 1889 г. № 1—Свадебные
обряды у ахалцыхскихъ армянъ.

²⁾ «Աղջապքական Հանդէս» զիրք Ա. 1896թ. Զաւախք՝ Ա.
Լալայեանի.

առնում աղջկան, որը իւր հետ առած է լինում իւր բոլոր զարգերը, և փախչում: Եթէ աղջկայ ծնողները շուտ են իմանում այս, իսկոյն մի քանի ձիաւորներ հետևում են նրանց և եթէ համառ են, տեղի է ունենում մի կատաղի կոփւ, որի ընթացքում երրեմն մարդիկ էլ են սպանում: Եթէ չեն կարողանում աղջիկը յետ խլել, աղան տանում է նրան մի ուրիշ գիւղ, իւր մի բարեկամի տուն: Անմիջապէս աղջկայ հայրը յայտնում է մարմաւոր և հոգեոր իշխանութիւններին, որոնք աղջկան կանչում, հարցաքննում են: Եթէ աղջիկը խոստովանում է, որ իւր ազատ կամքով է փախել երիտասարդի հետ, նրանց թոյլ են տալիս պատկուելու, իսկ եթէ ոչ, բաժանում են: աղջկան վերագրածնում են հօրը, իսկ աղային պատճում պետական օրէնքներով Երրեմն պատահում է, որ երիտասարդը փախցնում է աղջկան, առանց նրա համաձայնութիւնն առնելու. այսպիսի գէպքերում հազիւ է պատահում, որ աղջիկը չզիջէր երիտասարդի ու նրա բարեկամների աղաչանքներին՝ յայտնելու թէ իւր կամքովն է փախել: Փախցրած և վերագրածուած աղջիկը հասարակութեան մէջ յարգանք չվայելելով թշուառ աղջիկները նոյն իսկ ակամայից համաձայնուում են ամուանանալու փախցնողի հետ¹⁾:

Բորչարուի գաւառում առնեանգումը տեղի է ունենում, երբ աղջկայ ծնողները համաձայն չեն լինում տալու իրենց աղջիկը նրա վրայ սիրահարուած երիտասարդին և երբ վերջինի ծնողները չեն կամենում առնել նրա սիրած աղջիկը: Առաջին գէպքում սիրահարուած երիտասարդը հաւաքերով իւր ընկերներին փախցնում է աղջկան: Ըսկերներից մինը մի յարմար տեղ զտնելով աղջկան, ըսնում է նրա ձկոյթ մատը, կոճիկները ծալում և հուփ տալիս: աղջիկը ցաւից ստիպուած վագում է երիտասարդի յետելից, մինչև որոշեալ տեղը, ուր թաք կացած ձիաւոր սիրահարը առնում է նրան ձիու վրայ և չափ ընկնում²⁾: Այս տե-

¹⁾ Ե. Լալայեանի՝ Վարանգա. եր. 117—118.

²⁾ Աղդ. Հանդէս, գիրք IX, 1902 Բորչարուի գաւառ, եր. 215.

սակ առևանգմանից առաջացած հետեւանքներն ու փոխազարձ յարաբերութիւնների վերջաբանը Բորչալուի գաւառում նոյն ընաւորութիւնն է ստանում, ինչ որ տեսանք նախորդ օրինակի մէջ՝ Վարանդայի վերաբերմամբ¹⁾): Ճառաց Աղջիկ փախցնելը շատ տարածուած է Ալեքսանդրապոլի գաւառի գիւղացիների մէջ և առհասարակ առաջանում է հետեւալ պայմաններից, Խնչպէս յայտնի է, գիւղերում թէ աղջկայ և թէ տղայի ընտրութիւնը վերապահուած է ծնողներին. աղջիկը իրաւունք չունի իւր համար փեսացու ընտրելու, դա մեծերի գործն է. տղան էլ շատ քիչ բացառութեամբ, համարեա թէ նոյն դրութեան մէջ է: Պատահում է, որ աղջիկը չաչը է քցածք (սիրահարուած է) լինում մի երիտասարդի վրայ, և ընական է, որ ծնողների ընտրած ուրիշ փեսացուն նրան զգուելի պէտք է երեայ. բայց նա իրաւունք չունի բողոքելու զրադէմ ծրնողներին, նրա անունը կըխայտառակուի, նրան ուրիշ աշքով կընայեն, և աղջիկը ստիպուած է լինում ժամանակաւորապէս խեղզել իւր մէջ իրան տանջող այդ զգացմունքը: Եւ ահա մի գեղեցիկ օր վեր է կենում իւր սիրած տղայի հետ ու փախչում հօր տանից. այդ գէպքում շատ քչերին է աջողում պսակուիլ փախած տղայի հետ և ապրել որպէս ամուսիններ: Պատահում են բացառիկ գէպքեր էլ. երբ մէկ երիտասարդ սիրահարուած է լինում մի աղջկայ վրայ, առանց վերջինից փոխադարձը ստանալու, և երբ դիմում է աղջկայ ծնողներին և մերժում ստանում, այն ժամանակ վճռում է օգոսովք փախցնել. իսկ այդպիսի գէպքերը շատ տիրայի վախճան են ունենում և շատ անգամ սպանութիւնների աեղիք տալիս²⁾: Եւ այդու նոյնանման առևանգման օրինակներ գտնում ենք Արեանի՝ Ապարանի գիւղօրայքում³⁾, Նմանապէս վերոյիշեալ ձեերով առևանգումը ստէպ կատարուած է Տաճկա-

1) Ibid. եր. 215—216.

2) Մշակ, 1904 թ. № 64. որմանը՝ Գնուելուած մ.

3) «Մշակ» 1903 թ. № 217. Այդը ուշամաս ոքը:

Հայաստանում՝ Բուլանը իսում. «Առևանդութիւնը տեղի կ'ունենայ զիխաւորապէս աղջիկ ու տղայի համաձայնութեամբ—սիրահարութեամբ. երկրորդ՝ երբ աղջիկը լիովին անհամաձայն է և առևանդութիւնը կրկաւարուի բռնի, կոպիտ ուժի միջոցաւ, առևանդողները կ'աշխատեն շուտով աղջկայ կուսութիւնը խափանել, որպէսզի կամայ-ակամայ աղջիկը հնագանդեցնեն»¹⁾։

IV.

Վերոյիշեալ մի շարք փաստերը պատկերացնում են առևանդման գոյութեան նշոյլները հայկական կեանգում։ Մենք տեսնում ենք, որ այդ բոլոր գէպքերում առևանդումն առաջացնող պայմանները, գործողութեան հանգամանքներն ու հետեանքները զարմանայի նմանութիւն ունին իրար հետ զանազան հայ կենտրոններում ժաղկող ժողովրդական կեանգում։ Չնայած այդ ժամանակակից օրինակներին, այնուամենայնիւ առևանդումն, իրեն սովորութական իրաւունքի մի դրական հիմնարկութիւն, այժմս արդէն վերացած կարելի է համարել մեր ժողովրդական կեանգից։ Սակայն երբեմն գոյութիւն ունեցող առևանդման սովորութիւնը թողել է հետքեր, որոնք այժմս էլ շշափելի են իրաքանչիւր քայլափոխում մեր սովորութական իրաւունքի մէջ։ Հասարակական յարաբերութիւնների կարգերը ժամանակի յառաջադիմութեան հետ չեն փոփոխում յանկարծակի շրջումներով, չեն դադարում իրենց գոյութեան կորել մզել պատմական ճակաւագրով զարգացող նոր կարգերի գէմ եւ նոյն իսկ, երբ ներս խուժող նոր տարրերը յաղթանակով սկսում են տիրել ժողովրդական կեանգին, վերջինիս հին իրաւաբանական յարաբերութիւնները, թէև մեռած, իրականապէս վերացած, բայց և այնպէս շարունակում են երկար ժամանակ պահպանուել զանազան սովորութիւնների, ծէսերի, մնութիապաշտութիւնների և այլ նման արտաքին ձևերի մէջ։

1) Աղջ. Հանդէս՝ դիրք Եւ. 1899 թ. Բուլանը։

Ահա թէ ինչու սովորութական իրաւունքը դարմանալի պահպանողութեամբ մնացել է տակաւին մեր ժողովով մէջ և մի տեսակ սրբագործել է այն բազմաթիւ ծէսերն ու սիմբօլիական ձևերն, որոնք տեղի են ունենում հարսանիքների ու նշանագրութեանց ժամանակից։ Առաջին հայեացքից անիմաստ ու աննպատակ ենթագրուող ծիսական կողմերը լուրջ հետազննողի աջում կարող են համարուել իրեւ մնացորդներ պատմական կեանքից, ժողովովի նախնական կացը բնորոշող յարաքերութիւններից մի խօսքով՝ հետքեր, որոնց հիման վրայ կարելի է դադար կազմել, թէ հնումը ծրագէս էր տեղի ունենում ամուսնութիւնը։ Յիշաւակի՝ ժամանակակից ժողովրդական հարսանիքի ծէսերի ու սովորութիւնների մէջ կրօնակնք մի շարք գործողութիւններ, որոնք սիմբօլիական ձևով պատկերացնում են, թէ ինչպէս փեսան բռնի ոյժով իւրացնում էր հարսին։

Առեանգումն հնարաւոր էր ՚ի կատար ածել ուրիշների, օտար ոյժերի օգնութեամբ։ Այս զէպքում մնձ գերէին խաղում ցեղակիցները, ազգականները, որոնք հրսակախումը կազմելով, արշաւում էին ամուսնացող երիտասարդի հրամանատարութեամբ հարսնացուի մնեցոց վրայ և փախցնում աղջիկը։ Հայոց հին օրինագրքերում գործ միշտ յիշատակւում են շնորհա անունով։ «որք հըսնն երթեալ էին օգնականք սուտ փեսային» (Շահապիվանի 7-րդ կանոնը)։ Նախընթաց զիխում առաջ բերած օրինակներից էլ երնում է, որ առեանգող երիտասարդը հանապազ իւրմատիկ ընկերների օգնութեամբ է փախցնում հարսնացուին։ Աղջիկն էլ ունէր իւր պաշտպաններից՝ իւր ազգակիցներից կամ սերնդակիցներից, որոնք իրենց կողմից դուրս էին գալիս առեանգործների գլէմ։

Այժմ մեր ժողովրդի մէջ մնացել է մի սովորութիւն, որ յիշեցնում է այդ նախկին հրսակային ընկերակցութեան գաղափարը։ Ինչպէս յայտնի է, իւրաքանչյուր նորափեսայ նախքան հարսանիքը, հրաւիրում է մի խումբ

երիտասարդներ ռազմավ չարէք է, ումակարներ և այլ անուններով, որոնք հարսանիքի ամբողջ միջոցին միշտ փեսայի շուրջն են խմբուած լինում ու հարսանիքի գոյն տուողներն են: Նմանապէս և հարսը քջապատուած է լինում իւրացիններով երկանո երիտասարդներով՝ «Հարսներց ըստընթարքներով», հարսներոյքները և այլ անուններով անձինք, որոնք մինչև որ հարսը մտնի փեսայի տունը, իրաւունք են համարում պահպանել աղջիկը «չարից»: «Մակարները», ռազմափները և ընդհանրապէս փեսայի ընկերակիցները հարսանիքի ժամանակ, մանաւանդ երբ գնում են հարսը քերելու հօր տանից, միշտ զինուած են լինում հրացաններով կամ ատրճանակներով. իսկ եթէ աղջիկը մի ուրիշ զիւղ է գտնելում, նոյն իսկ ձիւաւորուած ու սպառազինուած են գնում:

Դարալազեագում, երբ մօտենում են հարսի գիւղին՝ հարսնքաւորները աշխատում են փայլել արտաքինով. Զուռնայի նուռագածութեամբ նոքա շատ արագ արշաւում են ձիանց վրայ, ճարպիկ շարժումներ են անում, հրացաններ են արձակում, մի խօսքով՝ աշխատում են գիւղի ու շագրութիւնն իրենց վրայ գարձնել: Սոքա արագութեամբ մօտենում են զիւղին և նորից ձիու զլուխը թեքում և նոյն արագութեամբ յետ արշաւում գէպի զուռնաշիները, որոնք միւս հանդիսականների յետեից կամաց առաջ են զալիս¹⁾: Այս նկարագրութիւնից՝ ազափների խումբը նմանում է սպառազին հրաւակախմբի, որ գնում է, կարծես զիւռակցելով իւր քաջութեան վրայ, հարուստ աւար առնելու: Կրիմու հայերի մէջ հարսնաւների վերաբերմամբ կայ հարսանեաց մի երգ, ուր ՚ի միջի այլոց ասում է.

«Թագաւորը կուքա թուրով

Հալիսը շատ է, կառնու զոռով²⁾»

¹⁾ Քաջբերունի՝ Հայկական սովորութիւններ՝ «Ազգագրական Հանդէս» 1901 թ. VII և VIII գրք.

²⁾ Նոյն մանապարհորդական նկատողութիւններ—Դարալազագաց, «Փորձ», 1881 թ. № IV

Այդ տեսակ զինուած խմբի ներկայութիւնը պէտք է ենթադրել միմիայն նրանով, որ իւրաքանչիւր առևանգումն անշուշտ հանդիպելու էր ընդհարժան և ընդդիմաղրութիւնն այսօր շատ տեղերում սիմբօլիական ձևերով շարունակում է տեղի ունենալ, յիշեցնելով նախկին արիւնալի կոփաները:

Եթէ հարսը օտար գիւղացի է, սորա համազիւղացիքը փակում են պարանով ճանապարհը փեսայի գիւղից եկած հարսնքաւորների արշաւափմբի առաջ և մէկը իրենցից առաջ գալով, հրաւիրում է նորեկներին ըմբշակուլի: Այստեղ փեսայի աղքականներն ստիլուած են վոր նորերեւ հարսի համազիւղացի կտրիմներին, որպէսզի սորա վերցը-նեն պարանը և ճանապարհ տան նորեկ փեսայի խմբին¹⁾: Արդ աւելորդ չի լինի առաջ բերել յայտնի ճանապարհորդ պ. Քաջբերումու մի նկարագիրը՝ հարս բերող կտրիմների այդ տեսակ արշաւախմբի մասին: Ճկալերի մօտ, մեր ճանապարհի վրայ սպասում էր մեղ առոյգ երիտասարդ-ների մի խումբ, նրանցից մինը, չուխան հանած, թեսրը վեր քաշած, զլուխը բաց, երեսը վառ, աշքերը փայլուն, այնպիսի մի դիրք էր բռնել, որ կարծես առիւծի նման պէտք է յարձակուի իւր որսի վրայ: Նրա ընկերները առանձին խնամքով նրան բռնած, ծանրաքայլ կերպով յառաջ էին մղում: Տօ, լա, ձիս բռնէք, ձիս բռնէք, մէ՛ ըշ-կացէք դար մէջքը քանի տեղից կրկնուեմ—առաց և ձիուց վայր նետուեց մեր խմբից մի առոյգ, ուժեղ երիտասարդ: Փոքը էր մասցել, որ երկու ախոյեանները միմեանց կրպչէին, բայց մեր խումբը բռնեց մեր երիտասարդին և ապա հանելով խուրջինից եփած միս, գաթայ, հաց, զինի, յանձնեցին Խաչիկու (գիւղի անունն է) խմբին: Այս սովորութիւնը լինում է այն ժամանակ, երբ մի գիւղից զնում են միւս գիւղը հարս բերելու: Նորահարսի գիւղի աղափ-ները դուրս գալով հարսնքաւորների առաջ, կրպանան զեն

1) Свадебные обряды ахалцихеск. армянъ.—Этнографическое Обозрение, 1889 г. №1.

նրանցից կամ մենամարտութիւն կամ ուսելիք և խմելիք, որ կոչում է ազափանաւ¹⁾։

Երկու հակառակ խմբերի մըցման ու ընդհարման նոյն օրատիերն է նկարում պ. Բնենէն Բուլանըխում կատարուող հարսանեկան սովորութեան վերաբերմամբ։ Ե՞ուրոն ընդածուրիկ երիտասարդներն (վեսայի կողմից), տօնական շորերով գարդարուած, ընտիր ձիերու վրայ հեծած, ձեռքերնին երկայն ու հաստ փայտեր՝ և ոմանց՝ նաև գէնքեր առած, երգելով քրդական լոլօն, ձիարշաւով և ջրինդով առաջ կերթան։ Այս և մի խումբ ձիաւորների, որ աղջկայ գիւղի կողմից կրդիմաւորէ հարսնածին, ջրինդով մըցութիւն կրսկաւուի. մէկն իւր ձին, միւսն իւր ձեռքի ոյժը կրտորձէ, մական կրձգեն, հարսած կրտան, կերգեն, կրտօնան և հարսնարոցով կրմօտենան գիւղին, բայց վերջինիս նպատակն է հարսնածից սոլօս (զիսարկը) փախցընել, որ եթէ յաջողուի իրենց, հարսնածի համար մեծ անպատութիւն կրհամարուի։ Զրինդի իրարանցման միջոցին դիմաւորող խմբից մէկը հարսնածի անդամներից մէկի գրուսնա առնելով կրտախչէ. բոլոր ձիաւորները կրնգնեն յետելից, կողմանկիցները կրտաջալերեն, հակառակորդները կրհամածեն մինչև գիւղը, եթէ բռնել յաջողեցան՝ լաւ կրցնգսեն։ իսկ եթէ ոչ՝ կորագլուխ կրինեն, և 10—20 դրուշ տալով, քոլոսը յետ կ'առնեն։ Եթէ քոլոս փախցընը չյաջողուի, ձիաւորները խաղը շարունակելով և իրեն ախոյեաններ մըցելով կրմօտենան գիւղին²⁾։

Այս տեսակ կերծեալ ընդդիմադրութիւն ցոյց են տալիս փեսայի ընկերներակիցներին ոչ միայն աղջկայ գիւղի սահմանում, այլ և այն տանը, որաեղ ապրում է հարսնացուն։ Ախալցխայի գաւառում հարսի ազգականները, առաւելապէս երիտասարդութիւնը կերծօրէն ընդդիմանում էր գաւիթ ներս թռնել փեսացուին և սրա ուղեկիցներին։

1) Քաջրերունի՛ Շահնապարհորդական նկատողութիւններ—Դարալազեազ «Փորձ» 1881 թ. № IV.

2) Բնենէն Բուլանըխ—«Ազգագիտական Հանդէս» 1899թ. զիրք 6.

և ապա արդէն, երբ ընծաներ էին ստանում, թոյլատրում էին նորեկներին ներս մտնել հարսի տունը¹⁾:

Չաւախքում, երբ փեսի հայրը, տղամարդ բարեկամ-ներն և քաւորը գաւուզ դուռնի առաջնորդութեամբ հաս-նում են հարսնացուի տանը, տան փոքրիկներից քանիսը փակում են դուռը և միայն այն ժամանակ են բաց անում, երբ քաւորը տայիս է 20—30 կոպ.-շ²⁾:

ԶԵՅԹՈՒՆՈՒՄ, երբ հարսին պէտք է դուրս տանեն տանից, սորա եղբայրը կամ մօտիկ ազգականներից մէկը փակում է դուռը և թոյլ չի տալիս հարսին տանել, մինչեւ որ մի ընծայ, մեծ մասամբ կարմրագոյն կօշիկ, չստանայ փեսայի կողմից³⁾:

Նմանապէս և Բուզանըխում, «երբ հարսը կրմեկնի հայրենական օճախից և մինչեւ սկեսրայրը դրսու գուան շէմքը կրփոխէ, հարսի եղբայրներից մէկը դուռն կըշտին կանգնած, ձեռք կըձգէ խնամու օձիքը և կըպահնանջէ աղ-քօր գօտին, որ ընդունուած սովորութեան համաձայն անպատճառ կրտրուի և ապա հարսնածը կընդնի նանա-պարհ⁴⁾:

Այս ընծաները կամ դրամական վճարները վերև բե-րած օրինակների մէջ ուրիշ ոչինչ են, եթէ ոչ մի տեսակ փրկանքի գաղափարի մարմնացումն, փրկանքի որ ստի-պուած էին լինում առևանգողները վճարել հարսի ազգա-կաններին կատարած յափշտակութեան համար: Այդ փրը-կանքի ներկայութիւնն այսուեղ գարձել է բարեփոխուած ու իւր սկզբնական նշանակութիւնը կորցրած մի ձեսկա-նութիւն, որ երկար պատմական զարգացման հետևանք է: Այդ փրկանքի գոյութիւնը մեզ ծառայում է իրբն մի փաստ, որտեղ թագնուած է յետագայում գնումամբ կա-

1) Свадебные обычаи ахалцыхскихъ армянъ.—Этнографическое Обозрѣніе, 1889 г. № 1.

2) Ե. Լալայեան.—Չաւախք՝ եր. 139.

3) Տ. Ալլանգերդեան.—Ռւճիս կամ ԶԵՅԹՈՒՆ.

4) Բենսէ՝ Բուզանըխ, «Ազգագր. Հանդէս» 1899 թ. գիրք Ե.

յացող ամուսնութիւնների սկզբնաւորութիւնը, գնման սովորութեան առաջի սագմերը:

Ակների է, որ առևանգումն տեղի ունենալուց յետու ովէտք էին թշնամական յարաբերութիւններ առաջանային փեսայի կողմանակիցների ու հարսի ազգականների միջն։ Ահա և այդ տեսակ թշնամական յարաբերութիւնները կեղծ ձեւականութեամբ արտայայտում են և այժմեան հարսանեաց մի քանի սովորութիւնների մէջ։ Նախ՝ այդ թշնամական վերաբերումը կարելի է տեսնել այն երեսյթի մէջ, որ հարսին ցըջապատող ազգականներն ու մասաւանդ համագիւղացիքը ամենայն կերպ աշխատում են փեսացուի ընկերակիցներին ծաղր ու ծանակի և ընդհանրապէս վիրաւորանքի ենթարկելու։

Գանձակի գաւառում սովորութիւն կայ երեկոյեան, երբ զուռնան նուագում է հարսնետանը, բոլոր հարսնեորները նորից հաւաքում են հարսի տունը... թաղթի վրայ իւր մակարներով ցըջապատուած թագաւորը նստած է լինում և բերանը մի կտոր բան չի դնում, մինչեւ որ աները մի որևէ բան չի նույիրում նրան իրը ցերանքացէք։ Բայց իրեն այնպէս ծանր ու մեծ պահող թագաւորին սաստիկ սեացնում են թագունու ընկերուհիները, եթէ սա զտած չի լինում նորահարսի մատների մէջ պահուած մոմը։ Աղջիկները ցոյց են տալիս այդ մոմը մակարներին և ծիծաղում են թագաւորի անշնորթութեան վրայ։ և երբ ինչն իրեն են ուղարկում, նա կարմրելով փող է վճարում, որ թագընեն, եթէ աղջիկները քիչ են համարում այդ՝ վերադարձնում են փողը և կրկին ցոյց տալիս մոմը, մինչեւ որ վերջապէս գոհացում են ստանում¹⁾։

Դարալագեազում, ինչպէս և շատ տեղերում, եթէ թագւորամայլը նոյնպէս եկել է աղամարդկանց հետ հարսը տանելու՝ նորա մասին երբեմն ասում են գուարճանալու և ծիծաղելու համար հետեւալ խօսքերը։

1) Ե. Լալայեան՝ Գանձակի գաւառ.

«Խնամի դու խոշ ևս եկել» այս առաջնային բարձր
Դարդակ ու բոշ ևս եկել» վահառ մասնել տպակ
Երկու բլոճ ևս բերել,
Են էլ ճամբին ևս կերել.
Բերածդ է կանանչ կապայ
Թերեն ու փէշը ժակ ա.
Խնամի, դու խոշ ևս եկել,
Դարձ առաջնային բարձր և առաջնային բարձր
Դարդակ ու բոշ ևս եկել »).

Այդ տեսակ վիրաւորանքներից մէկն էլ «Քօլորզ» փախ-
ցնելն է, որ, ինչպէս մեզ արգէն յայտնի է, տեղի է ունե-
նում Բուլանըխում, Գլխարկ փախցնելու սովորութիւնը
զարմանալի նմանութեամբ զոյութիւն ունի նաև Կովկա-
սում Օսերի մէջ¹⁾: Նոյն Բուլանըխում, երբ հարածածի
խումբը իջևանում է հարսի գիւղում, չհարածած հիւրասի-
րող տանտէրերը մեծ զզուշութիւն կրբանեցնեն, թշնամի
մարդիկը հարածածի ձիերու պոչերը չկարեն, որ մեծ ան-
պատռութիւն և անարզանք է, և ինչպէս շատ անգամ
պատահել է, այդ կերպ անարգուած անձինք սրտի կովիծէն
մեռեր ենք: Նոյն կեղծ վիրաւորանքի պատկերն է ներկա-
յացնում Բուլանըխում կատարուող հետեւեալ սովորութիւնը:
«Քափորից գուրս, երեխայքը երեսներին ալիւր քսած տե-
սակ տեսակ ծամածութիւններ ու միմոսութիւններ ա-
նելով կրվազգեն այս ու այն կողմը. փեսայի մերձաւոր-
ներից մէկը, իշու վրայ հեծցնելով՝ պոչը կուտան ձեռքը
ու չորս կողմից ճնթօփ ու քարէ կոշաեր կուտան հաւ կու-
տան խեղճի զլխուն ու արեւն, բայց նա ոչ ոքի խաթրին
չղիպչի հասարակութեանը զուարձութիւն պատճառելու
համար»²⁾.

Զէթունում, երբ հարսին գուրս կրտանեն տանից,

1) Քաջրերունիք՝ Հայկական սովորութիւններ—Շպղազրա-
կան Հանդէս, 1901 թ. զիրք VII և VIII

2) Максимъ Козалевскій—Древній законъ и современныи
обычай, т 1 стр. 250.

3) Բուլանըխ,—Ազգազր, Հանդէս, 1899 թ. զիրք 6.

կ'ակսեն հրացանաձգութիւն և երեխայքը ու շրջապատող-ները կը կանչեն՝ «խարեցինք, առանք»¹⁾։

Եիրակում մինչեւ բանայի զալն ու նշան օրնենելը հարսի առնը հաւաքուած փեսայի ադգամականները զանազան խորտիկներով լի սեղանը վայելելուց յետոյ, հարսնացուի ծնողներին ու մերձաւորներին լացացնելու նպատակով բաւելով երգում են՝ «Ճանում, տանում են, առէ ջան երգը»²⁾։

Ախալցխայի գաւառում, նմանապէս շատ տեղերում, խաչեղբայրը պսակի առաջին զիշերը չն քնում և հակում է, վախենալով՝ մի գուցէ աղջկայ եղբայրը զողանայ նրանից փեսայի թուրը. և եթէ զողացուի՝ դա մեծ անպատ-ւութիւն է համարւում փեսայի համար։

Դարալազեագում հարսնածի ժամանակ աղավներն ու թագաւորի կողմի մարդիկ դուրսը կանգնած, պիտմամբ դուռը մեր են անում և ճիշնինի, ճիշնինի, հարսը տարածն որպէսզի բարկացնեն հարսի ծնողներին ու բարեկամներին։ Այդ հրաժարականի, լացի, աղմկի և ուրախութեան ժա-մանակ աղավներից մինը, որ կոչւում է աղուէս, ընկնում է հարսի հօրանց հաւերի յետնից և ժածուկ աշխատում է բոնել նրանց ու տանել, որպէսզի յետոյ աղավներն ու-տեն, քէֆ անեն³⁾։

Դանձակի գաւառում հարսնածի ժամանակ մակոր-ներն ու աղավները ժաղորում են հարսնամօրը երգելով։

Մէջքդ կոտրի, հարսնամէր,
Կուազ կոտրի, հարսնամէր,
Ուոգ կոտրի, հարսնամէր,
Աշքդ գուրս գայ, հարսնամէր,
Ա՛յ, բէյմուրվաթ, էս թնջօ,
Ռտախէդ գնում ա, էլ չի գալ⁴⁾,

1) Ալլահվերգեան, — Ռէնիս կամ Զէյթուն։

2) Էմինեան Ազգագրական ժողովածու, հատ, Ա. երես, 247.

3) Քաջրերունի՝ Հայկական առաջութիւններ—Ազգագրական Հանդէս, 1901 թ. զիրք VII և VIII եր., 179.

4) Եր. Լալայեան՝ Դանձակի գաւառ—եր. 32—33.

Մինոյն ժամանակ՝ մակարներն առանց այլեայլութեան սկսում են սրով խփել ու սպանել պատահած հաւերին և սրանց ոչ մի տէրը իրեն իրաւունք չի համարում պահանջել հասի արժէքը։ Երբեմն այսպէս են վարւում նաև պատահած գառների և ուկերի հետ¹⁾։

Բորչալիում հարսնառ զնալիս, եթէ թագուորը բարգան կտրերի ժամանակ որոշուած նուէրներից պակաս կամ վատ է բերել, հարսնացուի կողմի ազափները ծեծում են թագաւորի մակարներին, թէ ինչի են նորա քիչ կամ վատ բերել։ Սովորաբար հարսի դիւղի ազափների համար թագուորը նուէր է տանում թխուածքներ և հաւ, ապա թէ ոչ այդ ազափները կը յարձակուեն թագուորի մակարների վրայ և, իրենց պահանջը յայտնելով, կը ծեծեն նրանց²⁾։

Թշնամական այդ յարաբերութիւններն երկու կողմերի միջև աւելի ևս կենդանի են ներկայացւում՝ հարս թագընելու սովորութեան մէջ։

Վարանգայում, երբ փեսան իւր ընկերներով զալիս է հարսնացուի տունը, ևմի քանի ըոպէում բոլորը խուժում են ներս։ Ղարադամի մի անկիւնում մի վարագուրով կտրած է լինում, որ կոչում է պուճախ։ Այսոեղ է լինում հարսնացուն իւր մի քանի ընկերուհիների հետ։ Մակարները զնում, նստում են վարագոյրի մօտ, իսկ քաւորը, թագուորը և փեսեղբայրը կանզնում են դորդի առաջ վառ մոմերը ձեռքին։ Տան ծերունին մօտենում է թագաւորին և նուիրելով նրան մի գօտի կամ մի ուրիշ բան։ Խնդրում է նստել։ Թագուորը, եթէ զո՞ւ է մնում, նստում է, իսկ եթէ ոչ, կանզնած մնումք։ Այնուհետեւ տնեցիներից ներկայ եղողները մօտենում են ու աղերսում, որ փեսան բաւականանայ ստացած ընծաներով³⁾։

1) Ibid. եր. 34.

2) Եր. Լալայեան՝ Բորչալուի զաւառ—Ազգագր. Հանդէս. 1902 թ. գիրք IX եր. 244—445.

3) Եր. Լալայեանի՝ Վարանգա—Ազգագր. Հանդէս. 1898 թ. գիրք. Բ.

Նոյն գաւառում հարսնքաւորներն երբ դիմում են դէպի աղջկայ տունը, վերջինիս հայրն իւր հիւրերով դիմուորում է արանց: «Մինն էլ մի երկար մաշալլա ձեռքին առաջնորդում է նրանց: Այս տեսնելով, մակարներն արձակում են իրենց հրացանները այդ մաշալլայի վրայ և ուռարդաւում»¹⁾:

Նոյնպիսի հրացանաձգութիւն տեղի է ունենում, ինչպէս վերը տեսանք, Զէյթունում, երբ աղջկան տանում են հօր տանից:

Ըսդհանրապէս շատ ու շատ տեղերում հրացանաձգութիւնը մակարների կողմից անընդհատ տեղի է ունենում հարսանիքի ամբողջ ընթացքում, մանաւանդ երբ աղջկան ուղեղցում են դէպի եկեղեցին և ապա փեսայի տունը: Առաջի հայեացքից կարելի էր ենթագրել, որ հրացան են ձգում գուարճութիւնից ու բաւականութիւնից: Սակայն այս սովորութիւնն, ինչպէս և շատ նման սովորութիւնները, եթէ քննենք աւելի խորը, կը գտնենք, որ դա ուրիշ ոչինչ է, եթէ ոչ, ինն ժամանակներում տեղի ունեցող առեանգման հետևող երեսյթներից մէկը: Զէ որ առեանգում առանց կռուի ու արիւնեղութեան չէր անցնում: Հետեապէս այդ մեր ժամանակակից հրացանաձգութեան վրայ սէտք է նայել իրեն մի լոկ, կեղծեալ պաշտպանողական միջոցի վրայ, որ փեսայի ընկերները ձեռք են առնում իրենց կարծեցեալ հարածողների՝ հարսնացուի ազգականների դէմ: Խոկ այժմս այդ հրացանաձգութիւնը, նախկին ժամանակներից մնացած զէնքով դիմադրելու սովորութիւնը՝ կորցրել է իւր հիմնական գաղափարը և դարձել է մի զուարճութիւն, մի բաւականութիւն, որ մի առանձին շուր է տալիս հարսանիքին:

Թշնամական (զոնէ առեանգման սկզբներում առաջացած) յարաբերութիւնների հետքերը կարելի է նկատել նաև հետեւալ ուշագրաւ սովորութեան մէջ, որ գըեթէ բոլոր հայոց մէջ գոյութիւն ունի: Աղջկայ ծնողները, նը-

1) Ibid.

մանապէս և ազգականներն, երբէք ներկայ չեն լինում թէ եկեղեցում պատկադրութեանը և թէ ընդհանրապէս հարսանիքում, վեսայի տանը, այլ հարսը տանելուց յետոյ մոռւմ են իրենց տանը Նոյն թշնամական հետքերը աւելի բէլիէֆ երեւում են Բուլանըի մի սովորութիւնից, «Պահկուելուց 4—5 շաբաթ յետոյ սովորութիւն ունեն հարսի հէրանք՝ վերադարձնել աղջիկը իրենց տուն, որ կըկատարուի յատուկ հրաւիրակ կնոջ ձեռամբ։ Մնալով 3—4 շաբաթ հէրանց տանը, վերադարձն նոյնպէս և վեսայի տան կողմից գնացող հրաւիրակ կնոջ ձեռքով կըկատարուի»¹⁾։ Այդ ժամանակից յետոյ հարսը իրաւունք ունի յանախելի իւր պապոնց տունը։ Այս տեսակ կեղծ խզուած յարաբերութիւնները երկու ընտանիքների մէջ և հարսանիքից յետոյ, ի հարկէ, պէտք է բացատրել այն թշնամական դդացմունքով, որը առաջանում էր հին ժամանակները աղջիկը փախցնելիս վերջինիս ծնողների մէջ։ Անհրաժեշտ էր հաշտութիւն կայացնել, որպէսզի աղջիկը կարողանար իւր ծնողների մօտ յաճախելը։

Մի նոյնանման սովորութիւն գոյութիւն ունի նաև Դարալագեագում, ուր մեծ պասի միջինքին (երբ հարսանիքը բարեկենդանին է կատարուած) հարսի հայրը իւր աղջկայ համար բերում է թարաղ, այսինքն զանազան մրգեղին և ուտելիք։ Մաղկագարդին իւր աղջկան հրաւիրում է իւր տուն և այդ հրաւէրը կոչում է զարծ. աղջկան ծնողները պահում են իրենց մօտ մինչև Համբարձում²⁾։

V.

Վերը բերած բոլոր օրինակները, մեր կարծիքով, միանգամայն բաւական են պարզաբանելու այն հարցը, թէ հա-

1) Բնեսէ Բուլանըի—Ազգագր. Հանդէս, 1899 թ. գիրք 6.

2) Քաջրերունի՝ Հայկական սովորութիւններ—Ազգագրական Հանդէս. 1901 թ. գիրք. VII և VIII. էր. 201.

յոց մէջ առևանդումն երբեմն զոյութիւն է ունեցել իրքե մի գրական իրաւաբանական սովորոյթ։ Սակայն, ինչպէս ներկայ յօդուածիս մէջ ակնարկել ենք, առևանդումը ժամանակի ընթացքում կամաց կամաց չքացել է ասպարիզից։ Այդ վերացման նույստող հանգամանքներն եղել են մի կողմից՝ քրիստոնէական վարդապետութեան ազգեցութիւնը, միւս կողմից էլ՝ սոցիալ-իրաւաբանական յարաքերութիւնների աստիճանական զարգացումը։ Մեզ արդէն յայսնի է, որ հայոց օրէնսդրութեան մէջ զոյութիւն ունէին մի շարք արդելական կանոններ, որոնք խմբագրուել են եկեղեցական ժողովներում մեր սուրբ հայրերից առևանդման դէմ իրքեւ մի անրարոյական երևոյթի, իրքեւ հակաքրիստոնէական հիմնարկութեան։ Այդ հիման վրայ պէտք է ինկատի առնուի, թէ ի՞նչ հզօր գեր էր խաղում հոգեւորականութիւնը մեր պատմութեան զարգացման մէջ և թէ հայ-հոգեւոր վարչական մարմինները որքան ճիգ էին թափում իրենց ազգեցութեամբ արմատախիլ անելու ժողովրդի կեանքից քրիստոնէութեան դադավարին հակառակ, կամ ինչպէս իրենք էին պնդում՝ հեթանոսական սովորութիւնները։

Միւս կողմից էլ՝ երբ քաղաքացիական կեանքը զարդարութ առաջ է բերում որոշ հասարակական հիմնարկութիւններ, երբ ժողովրդներից, ազգութիւններից կազմակերպում են պետական մարմիններ, որոնց նպատակն է ներքին ու արտաքին խաղաղութեան ու կարգապահութեան վրայ հոգ տանել, որպէսպի կարելի լինէր ընթանալ յառաջդիմութեան ուղիով, ինքնըստինքեան առևանդումը սկսում է չքանալ ասպարիզից։ Առևանդումն արդէն համարում է պետական կարգապահութեան սկզբունքին հակառակ ու ներքին հասարակական խաղաղութիւնը խանգարող մի երևոյթ։ Ակներեւ է, որ պետական վարչական մարմինները միջոցների և այն էլ խիստ միջոցների էին ձեռնարկում առևանդման զոյութիւնը կասեցնելու նորաակով։ Շնորհիւ այդ տեսակ միջոցների, առևանդումն, յի-

բաւի, սկսում է նուազել ու վերացուիլ ժողովրդի սովորութական իրաւունքից և տեղի տալ գնման սովորութեանը:

Հարսի գնումը, որ պէտք է ասած, գոյութիւն է ունեցել նոյնպէս շատ հին ժամանակներից 'ի վեր, զրեթէ տուեանգման հետ զուգընթաց, սկզբում միանգամայն այլ նշանակութիւն է ունեցել, նա ծառայել է իրեն մի փրկանք, որ վճարուել է աղայի կողմից աղջկայ տէրերին, որպէսզի մի կողմից՝ ծածկուի այն վնասը, որ կրում էին հարսի ծնողները, զրկուելով աշխատաւոր ձեռքերից և միւս կողմից՝ հատուցանուի աղջկի փախցնելիս վերջինիս ծնողներին ու ազգականներին հասցրած տոհմային վիրաւորանքը: Սակայն երբ առեանգումն անողօք արգելումների չնորնիւ նուազել է, գնումն ընդհակառակն աւելի և աւելի գարգանալով, սկսել է միանգամայն տիրապետող, ինքնուրոյն մի եղանակ դառնալ ամուսնութեան հարցում:

Հայոց մէջ, յիրաւի, գոյութիւն է ունեցել և այժմս էլ գոյութիւն ունի, քիչ թէ շատ փոփոխուած եղանակներով, հարսի գնումը: Մի կողմից թողած պատմական ազօտ տեղեկութիւնները, արդի ժողովրդական հարսանեաց սովորութիւնների մէջ, գննէ այն տեղերի վերաբերմամբ, ուր գնումն արդէն վերացել է, նկատում ենք հետքեր, որոնց սիմբօլիական ձեռքը յիշեցնում են երբեմն աիրապետող գնման գործողութիւնը:

Թէ պատմական Հայաստանում տարածուած էր զրնումն, իրեն մի իրաւաբանական երևոյթ, դա մեզ յայտնի է Բիւզանդական կայսր Յուստինիանոսի նշանաւոր XXI Novella-ից—«De Armeniis, ut et illi per omnia Romanorum leges sequantur», որով 536 թուից սկսած Հայաստանում մուծւում էր 'ի գործադրութիւն ընդհանուր Հոռվական իրաւունքը: Այս շրջաբերականի մէջ հոռվական կայսրը մատնացոյց է անում, որ հայերը շատ ստոր են դասում կանանց և թէ Հայաստանում տգեղ սովորութիւն կայ՝ այն է — գնել հարս ամուսնութեան համար, որպիսի գործողութիւնն ըստ հոռվական իրաւունքի այսուհետև

Խառնիւ արգելում է. «Mulierum vero nequoquam, neque sine dote eas ad viros venire, nec emi a maritis futuris, quod barbarice hactenus apud eos servabatur; non ipsis solummodo haec ferocius sentientibus, sed etiam aliis gentibus exhonorantibus naturam et femineum iniurantibus genus, tamquam non a deo sit factum nec serviat, nativitati, sed tamquam vile et exhonorandum et extra omnem competentem consistens honorem.

Մխիթար Գօշի Դատաստանազրբեց (զլ. ՃիԱ, մասն Առաջին) երեսում է, որ հարմագում պատկուելիս բերում էր իւր հետ ամուսնու առևնը իրենն սեփականութիւն գարձած ինչըք, որ XII դարում յայտնի էր «Երեսաց տեսոյ» անունով և որը բաղկանում էր նշանուած միջոցում իւր փեսացուից և որա ազգականներից ստացած նուէրներից: Այդ Երեսաց տեսոյն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ մի մասցորդ այն փրկանքի կամ գնման գումարի, որ վճարում էր փեսայի կողմից հարմագումին: Գնման պրօցէմն էլ ժամանակի ընթացքում, ինչպէս ապացուցանում են գանազան ազգերի իրաւարանական սովորութիւնները, փոփոխութեան ենթարկուելով, ակսել է վերանալ ու վերածուիլ մի այլ զործողութեան, այսինքն ընծայաբերութեան, որ անում է փեսան կամ որա ծնողները աղջկան՝ լինի զադրամով կամ իրերով: Զարմանալի չէ, որ հայոց մէջ էլ զնման երևոյթը կարող էր աստիճանաբար, մանաւանդ հոտվմէական իրաւունքի ազգեցութեան տակ, որը չէր ընդունում զնման սովորութիւնը, եթէ ոչ լիովին վերանալ, գոնէ վերափոխուել մի ուրիշ գործողութեան, այն է Եկեղեցաց տեսոյ» և այլ նոյնանման սովորութիւնների:

Նոյն այդ սովորութիւնը, որի մասին յիշատակում է Մխիթար Գօշը, այսօր տակաւին անարատ պահպանում է Հայաստանի շատ տեղերում: Ախալքալաքի ու Շուշուայ գաւառներում հանդիսաւոր նշանազրութիւնից յետոյ, փեսան, սորա ծնողներն ու սոցա հետ եկած ազգական հիւ-

ըերն սկսում են հարսնացուին փող ընծայել, և այդ գործողութիւնը կոչւում է «երես տեսանք»:
Երակում հարսնախօսութիւնից մի քանի շաբաթ յետոյ թէ քաղաքում և թէ զիւղերում սովորութիւն կայ հարսնատես անելու Այս դէպքում հարսնացուին, բացի նշանագրութեան փողից ու մատանուց, փեսայի ազգականները շաբով ոսկի, արծաթեղին ու այլ և այլ իրեր ընծայ են տանում¹⁾։

Այլ տեղերում նոյն սովորութիւնը կատարւում է աւելի բնորոշ գոյնով: Վրաստանի շատ կողմերում հայերը սովորութիւն ունին հարսը եկեղեցուց տուն բերելուն պէս ներս տանել անեւակը, խաչեղայրը բարձրացնում է նրա երեսի քողը և հրաւիրում է ամենքին գալ տեսնել հարսի երեսը, այսինքն տալ ընծաներ: ուստի այդ սովորութիւնն էլ կոչւում է երեսատես կամ երես մեսուկ²⁾:

Շատ հայարենակ գաւառներում սովորութիւն կայ, որ հարսը, եկեղեցուց՝ պատկազգրութիւնից զառնալով, չի մըտնում փեսայի տունը և չի նստում, մինչեւ որ սկեսուրը կամ փեսայի ազգականները չմօտենան և մի մի արծաթէ կամ ոսկէ զրամ տալով, ներս չհրաւիրեն:

Ակնայ մէջ նշանագրութեան ժամանակ, երբ երկար սակարգութիւններից յետոյ աղջկայ ձնողները տալիս են վերջնական համաձայնութիւնն իրենց զատեր ամուսնութեան համար, փեսացուն, սորա ծնողներն ու ազգականներն ընծայում են արծաթէ կամ ոսկէ զրամներ հարսնացուին, որ հերթով մօտենում է ամենքին և ձեռքերը համրուրում³⁾։

Այսուհետև աւելորդ չի լինի այստեղ յիշատակել մի այլ տեսակ ընծայաբերութիւն, որ անում է փեսան հարսնացուին, երբ սորա տուաջին գիշերն առանձնանում են

1) Էմինեան Ազգագրական ժողովածու, հատ. Ա. եր. 240.

2) Վահան վրդ. Բաստամեան՝ Դատաստանագիրք Մի. Դօյլ տես. Մանօթութիւն երես 290.

3) Բիւրակն—Կ. Պոլիս 1900 թ. № 23

առագաստ մտնելու։ Այս նուիրատութիւնը կոչւում է թերան քացէք, որով փեսան կարծես զնում է աղջկայ կուսութիւնն և իրաւունքը նրա հետ խօսելու, այսինքն նրա անձին տիրելու իրաւունքը, որովնեան սովորութեան համեմատ փեսան ու հարմանացուն նշանադրութիւնից սկսած մինչև այդ զիշերը իրար հետ չեն խօսում։

Փեսայի ու որս ազգականների կողմից հարմանացուին նուիրատութիւն անելու այս տեսակ սովորութիւնը խիստ բնդիննրական բնաւորութիւն է կրում և զրեթէ բոլոր ազգութիւնների սովորութեական իրաւունքի մէջ կարելի է դանել։ Շատ բնորոշ էր այդ սովորութիւնը նին հռովմէտեական իրաւունքի մէջ, ուր յայտնի էր donatio ante (prorter) nuptias անունով, որ կրնշանակէ ընծայաբերութիւն ամուսնութիւնից առաջ (ամուսնութեան պատճառով)։ Մինչդեռ հռովմէտեական իրաւունքով խստիւ արգելում էր ամուսնացած ժամանակը որևէ ընծայաբերութիւն անել կնոջը, որպէսզի վերջինս սիրոյ պատրուակով չըհարստանարէր ամուսնուն, ընդհակառակը նուիրատութիւններ անել իւր հարմանացուին նախ քան պատկը թուլարուում էր զուտ անտեսական շարժառիթներից։ Այս գէպքում օրէնքը պաշտպանում էր մի հայեացք, այն է՝ կինն ապագայում, ապահարզանի կամ մարզուց զրկուելու ժամանակը, ունենայ իւր անձնական մի սեփականութիւն՝ peculium, որը բաղկացած էր միմիայն dos-ից՝ օժիտից, ու յիշեալ նուիրատութիւններից և որի վրայ ամուսինը սեփականութեան ոչ մի իրաւունք չունէր։ Ակներև է, որ այդ donatio-ն, որ հօմանիշ է հայկական ժերեսաց տեսոյին, մի մեացորդ է գնման սովորութեան՝ coemptio-ի։ Այդ donatio-ն իւր իրաւուրանական հետեւանքներով, antifernajի (նուիրատութիւններից կազմուած գումարը) նշանակութեամբ պարփակում է իւր մէջ գնման պրօցէսսի զաղափարը, որ ժամանակի ընթացքում զարգանալով, կորցրել էր իւր սկզբնական բնաւորութիւնը։ Նոյն հետեւանքները նկատելի են նաև հայկական սո-

վորութական իրաւունքի մէջ։ Այն բոլոր ընծաները, որ ստանում է հարսնացուն, դառնում է նրա անձնական սեփականութիւն և կոչւում է շատ ընորոշ անունով՝ արծագին, այսինքն իւր սեփական մարմնի, իւր արեան զինը։ Աւրեմն այդ ընծաները մի տեսակ հատուցումն են, մի տեսակ զին կորցրած կուսութեան համար։ Շատ պարզ է, որ արնագինը հոռվմէական antiserna-ի նման, իբրև հետեանք երեսաց տեսոյի ևային նման նոռիրաաւութիւնների, երբեմն հնում ծաղկող գնման գործողութիւնից մնացած մի հետք է։

Խառնու մէջ ուժանելուունու բայ ոչ բարձր տակ գրաւու առաջնորդ ոչ վեցական VI. հինգ առաջաւայր մասն ապրանքանու ժամանակամուջ ու խռութեան առաջնորդութեանը։

Բացի վերև նկարագրած հարսանեկան սովորութիւններից, որոնք իրենց վրայ կրում են հարսի գնման որոշ հետքերը, մի քանի հայկական գաւառներում իրականութեան մէջ, տակաւին մեր օքերում, կարելի է հանդիսակել, թէ ինչպէս ամուսնութեան հարցում միշտ հանդէս են զալիս հարսի վաճառքի ու գնման սովորութեան գործողութիւնները, թէ և այդ գնումը տեղ տեղ մի տեսակ այլափոխուած է, բայց և այնպէս որոշակի աչքի է զարնում իւր առանձնայատուկ զծերով, որոնք միանգամայն կարող են տեղի ունենալ լոկ առեւտրական ընաւորութիւն ունեցող դաշնաքների մէջ։

Բաւական է միայն նկատի առնել այն հայեացքը, որ մեր ժողովուրդն ունի դէպի կինը, և մեզ պարզ կը լինի, թէ ինչպէս պէտք է վարուին ամուսնութեան հարցում։ «Ալզիկն օտարի ապրանք է» կամ «ազջիկը ծախուապրանք է»—ահա այն առածները, որոնք միշտ հնչում են մեր ժողովուրդի բերանում և ստիպում ըստ այնմ էլ իրագործել իւր հայեացքները։ Բուլանը խում հարսնացուի համար ժողովուրդն միշտ ասում է։ «Ալզիկը թաշկինակ մ'է», որ պէտք է ձգել ձեռաց վրայց, և կամ նշանապրութեան ժամանակ բարեմաղթում են՝ «իսէր տեսնես քո բազարից

(առևտութից)։ Վարանդայում վեսացուի պատգամները, երբ զնում են հարանացուի ծնողների մօտ աղջկայ ձեռքը խնդրելու՝ միշտ ասում են. «Առտուած տայ անփոշմնելի սովորա (առևտութ) ինի»։

Հատ Բենսէի վկայութեան՝ ամուսնութիւնը Բուլանիստում կատարում է գրեթէ զնմամբ. հարանախօսութեան ժամանակ սակարկում են, թէ որքան պէտք է վճարի վեսան աղջկայ համար, և այդ գումարը կոչւում է խալանի. առա առաջին մասը վճարուում է աղջկայ տիրոջը նշանառուէքին, իսկ երկրորդը՝ պսակից 1—2 շաբաթ առաջ¹⁾.

Նոյն երեսոյթը մննք պատահում ենք Դարարագում, և Գնմամբ ամուսնութիւնը դեռ ևս գոյութիւն ունի նաև Վարանդայում, որ երեսում է նոյն կտրօնը ծիսի մէջ. Այստեղ աղջկայ և տղի հայրերն ու բարեկամները երկար սակարկելուց յետոյ որոշում են, թէ տղի հայրը որքան փող պիտի տայ աղջկայ հօրը՝ աղջիկը տանելու համար. Այս գումարը տատանուում է 20—100 բուրու միջև։ Եւ մինչեւ որ այդ փողը չյանձնուի աղջկայ հօրը, որ սովորաբար այդ օրն է տեղի ունենում, պսակը չի կարող տեղի ունենալ²⁾.

Գնման գործողութիւնը մի տեսակ դաշինք է, որ կապում են երկու շահագրգռուած կողմերը. իսկ ամեն մի գաշինք կապելուն նախապէս հետեւում է սկզբնական համաձայնութիւնը, որ կայանում է որևէ առհաւատչեայի մէջ. Վերջինս գառնում է մի զրաւական դաշինքի անխախտելի իրականացման համար. Ահա այս տեսակ ընորոշ զիծ, որ յատուկ է առևտուական և ընդհանրապէս դաշինքների գործողութիւններին, գտնում ենք և հարսի զնման սովորութեան մէջ. Վարանդայում երկար շնառ ու չէ ասելուց յետոյ, երբ վերջապէս աղջկայ ծնողները յայտնում են իրենց համաձայնութիւնը, ամուսնացող երիտասարդը իւր եղրօր կնոջ հետ, առնելով մի հասարակ 20—60 կոպեկանոց մա-

¹⁾ Ազգագրական Հանդէս—Բուլանը, 1899. գիրք 6.

²⁾ Եր. Լալայեան՝ Վարանդա, եր. 118.

տանի, զնում է աղջկայ տունը Փոքր ինչ խօսակցութիւնից յետոյ աղջիկը, իւր երեսը քողով ծածկած, թէյ է մատուցանում, Երիտասարդի հետ եկած կինը աշխատում է բանալ աղջկայ երեսը ու տեսնել նրա գեղեցկութիւնը: Ապա համբռւրում է ճակատից և բերած մատանին դնում մատը: Այս ծէսը տեղական բարբառով ըստ տանիիլ է կոչւում¹⁾:

Զանգեգուրում այն գումարը, որ վճարում են տղայի ծնողներն աղջկայ ծնողներին հարսնացուի համար կոչւում է ծընապահ, այսինքն մանապարհի գինը, և կամ կոչւում է այլ անունով ծծագին: Ժողովրդի կարծիքով այսուեղ վճարում է մօրից ծծած կաթի գինը: Բացի ծծագնից տղայի հայրը պարտաւորուում է հարսնացուի ծնողներին ուղարկելու մի եղ կամ երկու ոչխար, 5—6 կուժ գինի, կէս կուժ օղի, թօփ ու կէս գարայի կտոր²⁾:

Եատ բնորոշ է այն խորհուրդը, որ տեղի է ունենում Տաթևում-Սիսիանում աղջկայ ու փեսայի ծնողների միջն, երբ որոշում են հարսնիքի օրը և թէ որքան փող ու ընծայ պէտք է տայ փեսայի կողմը աղջկայ տիրոջը: Արդ խորհուրդը տեղական բարբառով կոչւում է տուր և տո, կամ թաշլլ կտրել, որպիսի սակարկութեանը մասնակցում են նաև երկու կողմի ազգականներից ընտրուած մի մի հաւատարմատարներ՝ վարիլնելը³⁾:

Զաւախում, երբ վերջապէս աղջկայ հայրն յայսնում է տղի կողմից եկած պատգամներին իւր աղջիկը տալու համաձայնութեան մասին, վերջինները գալիս են տղի հօր մօտ և խորհրդակցում, թէ որքան գումար պէտք է տայ աղջկայ տէրերին և առնելով այդ գումարը դնում են աղջ-

1) Անգ. եր. 120.

2) Եր. Լալայեան՝ Զանգեգուրի գաւառ Բ. հատ. եր. 72.

3) Сборникъ матеріаловъ по описанію жѣстн. и народовъ Кавказа, Выпускъ II, 1882 г. & Выпускъ XIII 1892 г. „Татевъ“. Եատ Յ. Լալայեան—Զանգեգուրի գաւառը՝ Միսիան հատ. Ա. եր. 114.

կայ տունը։ Ցիշեալ գումարը կոչւում է հաղէմասի, որ արարերէն նշանակում է այս ասել, համաձայնել, Պէտք է յիշել, որ պատգամները տղի տունը մանելիս ամեն անգամ հիւրապիրում են, իսկ աղջկայ տանը մինչև հաղէմասին տալը ոչ մի բանով չեն հիւրապիրում։ Աղջկայ հայրը կանչում է իւր ազգականներից մի քանիսին և պատգամների հետ նստում օդան։ Պատգամները խնդրում են աղջկայ հօրը որոշել, թէ ինչ պիտի առնէ տղի հօրից աղջիկը տալու համար։ Սա հրաժարում է, ասելով՝ թէ աղջիկը իմ չէ, այս ինչինն է, թող նա ասի։ Սա էլ, նախապէս իմանալով աղջկայ հօր միտքը, սկսում է բարձրից բռնել։ Պատգամները սկսում են սակարկել և կանգ են առնում զլխաւորապէս վճարելիք փողի վրայ, որ տատանւում է 30—220 միջև։ Որչափ աղան սիրահարուած և աղքատ լինի, այնքան հաղէմասին բարձր կրլինի. այդ է պատճառը, որ աղքատ երիտասարդը ստիպուած է լինում կամ պարտքի տակ ընկնել, կամ փախցնել աղջկան։ Երկար սակարկութիւններից յետոյ, որ երբեմն մի քանի օր է տեսում, փոխադրձ զիջողութիւններով վերջապէս համաձայնութիւն են կայացնում, և պատգամները վճարում են իսկոյն դրամը աղջկայ հօրը¹⁾։

Ախալցխայի գաւառումն էլ գոյութիւն ունի գնմամբ ամուսնութիւնը։ Այն գումարը, որ վճարուում է փեսայի կողմից, յայտնի է զլխազին կամ թրքերէն թաշլը անուններով։ Գլխազինը հատուցանում են հարսնացուի ծնողներին, երբ վերջնները գալիս են այցելութեան փեսացուի տունը և յայտարարում վերջնականապէս, թէ յօժար են իրենց աղջկայ ամուսնութեանը²⁾։ Նոյն աեղը սովորութիւն կայ, որ նորափեսան հարսնակից առաջ քաւորի ու մի քանի մակարների առաջնորդութեամբ անձամբ զնում է բարեկամներին ու ծանօթներին հարսնակից հրափելու։

1) Ե. Լալայեան—Զաւախք, Ա. եր. 124.

2) Свадебные обычаи ахалцихских арианъ—Этнографический Обозр. 1889 г. № 1.

Վերջիններս այդ միջոցին մի մի աղլուխ կապելով փեաացուի վզին շնորհաւորում են՝ ոքարի առուտրով՝¹⁾:

Հարսի գնման սովորութիւնը ոքաշըրղին եղանակով գոյութիւն ունի նաև Շիրակի գաւառում՝ «Առաջարկութիւնները սրանք են. 100 մանէթ բաշըրդ, 5 հատ խալաթ, 1 թոփ լաւ Սպահանի շալ, մէկ մանուդ չուխացու, մէկ լաստիկ արխալուղցու, 12 գազ դանավուզ ու մէկ սիւտ հախի, այսինքն կաթնազին»²⁾:

Հարսի գնման այդ տեսակ սովորութիւններն այն աստիճան խորն են արմատացած մեր ժողովրդի բարքերում, որ մինչև օրս հնարաւորութիւն չի եղել միջոցներ ձեռնարկելու յիշեալ սովորութիւնից առաջացած ծանր հետեւանքները, եթէ ոչ վերացնելու, գոնէ մեղմացնելու նպատակով։ Այդ փաստը իւր փոյք է զրաւել նաև հայ եկեղեցական վարչութեան ուշադրութիւնը 1902 թուականի յունիսի 14-ին և յուլիսի 4-ին Ախալցխայի ու Ախալքալաքի գաւառի բոլոր քահանաներից ժողովներ էին գումարուել դործակալ Ընձակ վարդապետի նախագահութեամբ, որպէսզի խորհրդակցին այդ հարցի մասին Շշակը լրազրի Ախալքալաքի թղթակիցը հետաքրքիր տեղեկութիւններ է տալիս այդ մասին։ «Մեր գաւառի բոլոր հայ զիւղերում տիրող հաղէմասի, բաշըրդ կամ զինազին անունով յայտնի տգեղ, անպատճարեր և վերին տատիճանի վնասակար սովորութիւնն արմատախիլ անելու նպատակով, Ընձակ վարդապետը իւր վիճակի բալոր քահանաներին երկու անգամ ժողովի հրաւիրեց։ Նախագահը մի առ մի բացատրեց այն վնասները, որոնք առաջ են գալիս հաղէմասի սովորութիւնից, որ կայանում է աղջկան կամ այրի կողջը փողով համարեա թէ գնելու կամ վաճառելու սովորութեան մէջ։ յետոյ օրինակներ բերեց գաւառում տեղի ունեցող այդ ընտանեկան անհումանայնութիւններից ու պառակտումներից, որոնք առաջ են եկել

1) Անդ.

2) Կմինեան Աղդազրական ժողովածու, հատ. Ա. եր. 239.

այդ սովորութիւնից:... Ժողովը նպատակայարմար համարեց՝ մի յանձնագործով ընտրել, որ գործակալ վարդապետի նախագահութեամբ՝ հաղեմասու և առնասարակ դիւդական, նշանագրութեան ու հարսանիքի վերաբերեալ այլ տգեղ սովորութիւններն ու շայլ ժախչերը արմատախիլ անելու և չափաւորելու համար՝ մանրամասն ծրագիր ու պարտագիր կանոններ կազմէ և ներկայացնէ հետեւալ քահանայական ժողովին¹⁾:

Խօսք չկայ, որ այդպիսի պայմաններում շատ ծանր է լինում այն աղջկայ գրութիւնը, որը մօտենում է ամուսնական հասակին: Կարծես, ժողովրդի մէջ ամենքն էլ զգում են այդ բայց և այնպէս՝ հաշտում են իրականութեան հետ, հաշտում են հարս գնելու գաղափարի հետ, հետեւրով ու հաւատարիմ մնալով շաղաթերի աղաթինք: Մանաւանդ զգում են իրենց այդ անմիտթար վիճակը հենց իրենք կանացք. նորա զգում են, թէ իրենք առարկայ են և գրուած են ասպարիզի վրայ սակարկութեան ու վաճառքի համար: Եւ նորա այդ հոգեկան գրութիւնն արտայայտում է միմիայն այն երգերում, որոնց մէջ հայ գեղջկուհին դիտէ մեղամադիկ ու ազատօրէն իւր ցաւերը հնչեցնել: Բուլանընտում, նմանապէս և Զաւախքում, երբ հարսին զարդարում են հարսանիքի ու պատկազրութեան խորհրդի համար, կանանց մասում միշտ երգում են հետեւալ բնորոշ տողերը, որոնք պարզ ցոյց են տալիս թէ կանանց ճակատագիրը որոշուում է առևտուրով գնմամբ:

Զէւրիկ խարեցին կուռէ մէ գինով,
Զմէրիկ խարեցին թափիկ մէ շիլով,
Զազրէր խարեցին ջուխաակ մէ ջզմով,
Զքուրիկ խարեցին մատիկ մէ հինով.
Զզրամի հանգուրձ արձըկեցին՝
Զազչիկ մասուց ջոկեցին²⁾,

1) «Մշակ», 1902 թ. № 149.

2) Բենոէ—Բուլանընը՝ Ազգագրական Հանդէս 1899 թ. գիրք
Ե. հան. Ե. Լալայեան—Զաւախք, եր. 161.

Նոյնանման գաղափար է արծարծում նաև հետեւել երգը, որ տարածուած է Տաճկանայաստանի մի քանի գաւառներում.

Հըմա, մամա, հըմա մամա, արի թնչ է էղի.
Եկած են զիս կըտանեն, թնչ են բերած.
Բերած են աշմբ ու տըմբ, զըռ ու զըռ
Պանկճոտին, մազէ խարխիս, ծամ թոթվիշ.
Ուս պապկիչ, ապոյին բերած են քօլս մը,
Մախաթ ծէր կըսոսկըտայ կանեն վրէն,
Հար քոսուրայ բերան մէկ կ'երեայ,
Հըմա եկան տարան, տարան քաւորով
Տուն դըրեցին, փլաւներ կ'երանք.
Տէրտէր էկաւ ըրեց պըտուապուա
Գնաց, իւը ես կաժէ չենք¹⁾։

'Ի հարկէ, և ծնողները սովորութեան ազգեցութեան տակ նայում են իրենց աղջկայ վրայ, իրրե մի առարկայի։ Շատ ուշագրաւ են այն խօսքերը, որ արտասանում է մայրը Գանձակի գաւառում պասկազբութեան զիշերն, իւր աղջկանից բաժանուելիս. ոխի՞ ես լաց ըլում, որ աղջիկն ա իր հօր տանը մնացել, որ դու մնաս: Մի բուռ մոխիր ես՝ ուրիշին ենք տալիս, պէտք ա զնաս, ջուրն ենք զըցում՝ պէտք ա սուս կենաս, ընկնես, կրակն ենք զցում, պէտք ա աշքերդ խփես, մէջն ընկնես...²⁾։

VII.

Արդ կարող է հարց ծագել, թէ ուր է զնում և ում է պատկանում այն վճարը, որ ստացւում է հարսի զնման գործողութիւնից։ Մանաւանդ հասկանալի է այս տեսակ հարցի առաջանալը, երբ մտարերենք, որ մի քանի տեսակ ընծայարերութիւններն ու փողերը գաւնում են հարսի անձնական սեփականութիւնն, որպիսին է արնագինը, որի մասին արդէն առիթ ենք ունեցել խօսելու։

1) «Բազմավէոյ» 1902 թ. № 9—10. էր. 481.

2) Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, էր. 27.

Այն բոլոր տեղերում, ուր հարսի գնումը պահպանուել է թիչ թէ շատ անարատութեամբ, եղած փաստերի հիման վրայ կարելի է եղբակացնել, որ զիսազինը (բաշլըդը, հաղեմասին և ծծազինը) և ընդհանրապէս հարսի համար վրճարելիք գումարը յանձնում է աղջկայ հօրը. Այլապէս չեր էլ կարող լինել. Գնաման սովորութիւնը թիչ թէ շատ ծաղկում է, մեր ժողովրդի մէջ այնտեղ, ուր նահապետական ընտանիքի կողմը տակաւին կանգուն է մնացել Հայ նոհապետական ընտանիքը, կազմելով թէ տնտեսական և թէ սոցիալ - իրաւաբանական տեսակէտից մի առանձնակի միաւոր, հիմուած է համայնական գաղափարի վրայ. Այդ համայնական ընչական սկզբունքի համեմատ տանըութէրը, նորմապնտը, տան մեծը հանդէս է գալիս հասարակական փոխազարձ յարաբերութիւնների մէջ իրեն ներկայացուցիչ իւր ընտանիքի, իրրե պատախանատու անձն այն տնտեսական-իրաւաբանական համայնքի, որի տէրն է. Օժտուած լինելով իւր ընտանիքի անդամների վերաբերմամբ անսամբլ իրաւաբանորդէն նայած, գառնում է ոչ միայն հօր, այլ և ամբողջ ընտանեկան համայնքի անբաժանելի սեփականութիւնը¹⁾. Բացի դրանից՝ գանազան օրինակներից երեսում է, որ աղջկայ հօր արուած գումարի հետ միևնույն ժամանակ աղջկայ ընտանիքի մօտակայ միւս անդամներն էլ ըներ են ստանում. մայրը, եղբայրը, քոյրը ստանում են դերիացու, կապացու կամ չուխացու, դուլպա, քօլս, գօտի, եայրուխ և այլն. Սակայն այս վերջին ընծայաբերութիւնները նորագոյն ժամանակի երեսոյթներ են և բնաւ չեն խախտում այն ոկզրունքի էութիւնը, որի մասին է մեր խօսքը. Հարմացուի համար արուելիք գումարի էտական մասը՝ զիսազինը, որի մէջ է իսկապէս պար-

¹⁾ Տե՛ս մեր յօդուածը՝ Օչերки по общему и семейственному праву армянъ.— „Кавказскій Вѣстникъ“ 1902 г. № 1.

փակւում գնման գաղափարի մարմացումն, յանձնում է միմիայն աղջկայ հօրը՝ համայնական ընտանիքի պատասխանատու տիրոջը, համայնական սեփականութեան իրաւաբանական ներկայացուցչին:

Ժամանակի ընթացքում սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցութեան տակ նահապետական գերդաստանները համայնական գաղափարով սկսում է տարրալուծուելու վերածուել անհատական ընտանիքի, ուր ընտանիկան իրաւունքի վերաբերմամբ անշուշտ գերիշխում են այլ հայեացքները: Այստեղ արդէն ընտանիքի կազմի թէ բարոյական և թէ անտեսական հիմքը կազմում է անհատական գաղափարը: մի գաղափարը, որ արդի ընտանիքի բաղկացուցիչ անդամներին թէ ներքին և թէ արտաքին հասարակական փոխադարձ յարաբերութիւնների մէջ տալիս է այնպիսի անկախութիւն, որ միմիայն մեր ժամանակակից սոցիալ-տնտեսական սկզբունքների անհատականութեանն են յատուել: Ահա այսպիսի պայմաններում, ակներևէ, որ հօր իրաւունքն ընտանիքի անդամների ընչքի ու սեփականութեան, որպէս և նոցա անձնական ինքնուրոյնութեան վրայ, որոշ ու զգալի չափով սահմանափակւում է:

Ընտանիքի հայրն այլ ևս անկարող է լինում իւր աղջկայ համար արուած գնման վճարի վրայ այն իրաւունքը բանեցնել, ինչ որ յատուել է նահապետական համայնական ընտանիքի գաղափարի տիրապետութեանը: Աչ թէ հայրը, այլ աղջիկն է այժմ հանդիսանում տէր այդ վճարուած գումարի, որն իւր անձի, իւր զիսի վաճառումից է ստացուել: Ծնորնիւ այդ անհատական գաղափարին, աղջիկն ամուսնանալիս ամենայն իրաւամբ այն գումարը, որ վճարել են նրա հօրը իւր անձի համար, տանում է իրեն իւր անձնական սեփականութիւն իրեն հետ ամուսնու տունի: Ահա այստեղից ծագում է օժիտի կամ բաժինքի գաղափարը, որ յայտնի էր տակաւին հին հոռվմէական իրաւունքի մէջ օս անունով, և որ կազմում էր կնոջ սեփականութիւնը—peculium: Բաժինքի մասին յիշատակում է նաև

Միահմար Գօշն իւր Դատաստանադրքի ՃիԱ գլխում (մասն Ա), Օժիտի գաղափարի աստիճանական գարգացման զուգընթաց սկսեց քայլայուել հարսի գնման սովորութիւնը, որը յետագայ սոցիալ-անտեսական գործոնների ճնշման առակ այլևս անկարող էր արդի հասարակական պայմաններում իւր գոյութիւնը պահպանել: Այսպիսով ժամանակի ընթացքում հարսի գնման՝ զլխազնի սովորութիւնը շատ տեղերում խսպառ չբացաւ, տեղի տալով մի նոր հիմնարկութեան՝ օժիտի սովորութեանը:

Հարսի գնման վճարից օժիտի կամ բաժնիքի գոյանալը ՚ի հարկէ կատարուել է երկար էվոլյուցիօնի ընթացքով, ուստի իւր ընաւորութեամբ օժիտի էութիւնը տարբեր աստիճաններ է ներկայացնում: Մի տեղ մննք տեսնում ենք, թէ ինչպէս օժիտի և հարսի զլխազնի հիմնարկութիւնները հաւասար իրաւունքով միաժամանակ ծաղկում են ժողովրդական սովորութիւններում: Մի այլ տեղ օժիտի ներկայութիւնը շնորհիւ իւր նորութեան տակաւին ոչ մի քաղաքացիութիւն չի գտնել: և ընդհակառակն այն բոլոր տեղերում, ուր զլխազնի սովորութիւնն խսպառ վերացել է, այնաեղ օժիտի գաղափարը գերիշխող դիրք է բռնել և այնքան ինքնուրոյն բացառիկ ընաւորութիւն է ստացել, որ շատ զիանականներ ճգնում են ապացուցանել, որ օժիտի գաղափարը միանդամայն անկախ է զլխազնի գաղափարից ու տաշջ է եկել միանդամայն այլ պայմաններից: Այդ պատճառով և ժողովրդական սովորութիւնների ուսումնասիրութեանց բազմաթիւ աշխատութիւնների մէջ օժիտի գոյացման ու էութեան մասին տիրում են զանազան թեր ու դէմ կարծիքները:

Նպատակ չունենալով ծանրաբեռնել ընթերցողներիս ուշազրութիւնն արդի իրաւագիտութեան մէջ օժիտի գոյացման ու զարգացման վերաբերեալ լոյս տեսած տեսական հայեացքների քննութեամբ, շատանում ենք շեշտելու մեր այն կարծիքը, որ հակիրճ կերպով արտայայտեցինք փոքր ինչ վերը: Օժիտի սովորութիւնը մննք ընդունում ենք իրու

մի հիմնարկութիւն, որ առաջ է եկել նախկին զյօնագնի հարսի գնման վճարի՝ սովորութիւնից աստիճանական գարգացմամբ, երբ հասարակական փոխադարձ յարարերութիւնները ակսել են կարգաւորուել սոցիալ-տնտեսական դարգացման հետևանքի անհատական սկզբունքներով։ Աշխատենք մի քանի ընորոշ փաստերով լուսաբանել օժիտի վերաբերմամբ վերը յայտնած կարծիքները։

Հին երրայական իրաւունքի մէջ տիրապետում էր գնման սովորութիւնը։ Փեսացուի կողմից վճարուած զբոխագնի մի մասն, ինչպէս երեսում էր, անցնում էր աղջկայ ձեռքն իրքն իւր սեփականութիւն։ Այդ մասին կարելի է կողմնակի ապացոյցներ գտնիլ Աստուածաշնչի մի շարք հատուածների մէջ։ Գիրք Ծննդոցի Առ. գլուխը բովանդակում է Յակոբի և Լաբանի պատմութեան այն կէտը, թէ ինչպէս նոքա երկուքը փոխադարձ համաձայնութիւն էին կայացրել, որով Լաբանի հօտից այն բոլոր խաշները, որոնք ոգորշախայտ, պիտակ և խայտախարիքը ծնուէին, պէտք է պատկանէին Յակոբին։ Իսկ մնացեաները Լաբանին եւ եղաւ, որ մի քանի տարի անընդհատ ծնուռում էին խաշներ այն դոյնով ու նշաններով, որ հարկաւոր էին Յակոբին։ Այսպիսով Յակոբը հարստացաւ ՚ի հաշիւ Լաբանի։ Այն ժամանակ Լաբանի որդիիքը բողոքեցին Յակոբի դէմ, թէ էշառ Յակոբ գամենայն ինչս հօր մերոյ, և ՚ի հօր մերոյ ընշից արար իւր զայն ամենայն փառաւ։ Ռւստի Ռաքէին ու Լիան՝ Լաբանի դստերքն իրաւունք համարեցին յայտնել Յակոբի մօտ առաքած հրեշտակին։ ՄԵՐԹԷ գոյ ևս մեր այսուհետե բաժին՝ և ժառանգութիւն ՚ի տան հօր մերոյ։ Ոչ ապաքէն իրքն զօտարութիւն համարեալ եմք նմա, զի վաճառեաց զմեզ՝ և եկեր ուտելով զարծաթ մեր։ Յայտնի զիտնական Մայերը, լուսաբանելով այս վերջին խօսքերը իւր աշխատութեան մէջ՝ «Die Rechte der Israeliten, Athenern und Römer», նկատում է, որ Լաբանի աղջիկների խօսքերից հետևում է, որ սրանք ստանում էին իրենց հօրից փեսացուի կողմից իրենց համար վճարած պլխագնի մի մասը,

Հակառակ գէպքում Յակոբի կանայքը բնչ հիմք ունեին արանջալու, իբր թէ նոցա հայրը իւրացրել էր, ինչպէս իրենք են ասում, ուստեղով զարծաթ մերք, այսինքն նըրանց վճարած զիխագինը¹⁾:

Մահմետական իրաւունքի մէջ յայտնի է, որ փեսացուի կողմը վճարում է հարմնացուի հօրը որոշեալ զիխագին, որ կոչւում է մուհի: Մահմետական իրաւունքի Հանէֆիտական դպրոցին պատկանող յայտնի մի լուսաբանութեան՝ Հեղայի մէջ՝ խօսուում է մարդի մասին, իբրև մի վճարի, որի մի մասն աղջկայ ծնողները գործադրում էին օժիտի համար և յատկացնուում էին 'ի սեփականութիւն աղջկան, ամուսնու տունը զնալիս:

Գերմանական հին օրինագրքերից երևում է, որ հարսնացուի հօրը վճարուած զիխագինի ամրող գումարից պատրաստում էին հարսի օժիտը Նոյն իսկ Տակիտոսը իւր «Գերմանիա» աշխատութեան XIX դիմում հաստատում է, թէ իւր ժամանակակից գերմանացիների մէջ սովորութիւն կար, որ տինչպէս փեսան է բերում հարմնացուի համար օժիտ (իման զիխագին), նմանապէս էլ աղջիկը բերում էր իւր փեսացուի տունը օժիտ:

Իրլանդական հին իրաւունքի մէջ էլ նկատելի է օժիտի գոյացումը զիխագինից այն փաստի հիման վրայ, որ փեսացուն իւր վճարելիք զիխագինի գումարը բաժանում էր, տալով մի մասը աղջկայ հօրը, իսկ միւսը—իրեն հարմնացուին՝ իբրև նրա սեփականութիւն, որ վերջինս անշուշտ բերում էր իւր հետ որպէս օժիտ՝ աղջկայ ամուսնու տունը:

Օսերը 1866 թուականին կովկասում, երբ տեղական վարչական մարմինների առաջարկութեամբ և իրենց փոխադարձ համաձայնութեամբ որոշել էին վերացնել իրենց բարքերից միքանի, իրենց հայեացքով վնասակար սովորութիւններ, վճռել էին՝ ապաղայում հարմնացուի համար վրարուելիք զիխագինի՝ նրանց լեզուով իրաղի՝ մի երրորդ

1) М. Ковалевский—Первобытое право, Вып. I երես 144

машар յատկացնել օժիտ պատրաստելու։ Այդ մի ձեռնարկ կութեամբ արդէն ճանապարհ էր հարթուած, որպէսզի զնման սովորութիւնն աստիճանաբար չքանար. որովհետեւ կարելի էր ենթաղրել, որ օսերը ժամանակի ընթացքում, վարժուելով հարսի զնման վերաբերեալ ձեռք առած միջոցների գաղափարին, յետագայում միանգամայն համաձայնուէին ամբողջ շիրազի գումարը յատկացնելու օժիտին¹⁾.

Առաջ բերենք մի քանի օրինակներ հայոց սովորութական իրաւունքից, որոնք թէև աղօտ, բայց և այնպէս որոշ չափով կարող են լուսաբանել, որ մեր ժողովրդի կեանքումն էլ օժիտի ու գլխազնի սովորութիւնները, համեմատելով վերոյիշեալ փաստերի հետ, նման պատկեր են ներկայացնում. օժիտի ու գլխազնի փոխադարձ առընչութիւնները նոյնանման նշանակութիւն են ունեցել կամ ունեն և նոյն իրաւաբանական հետեանքի են յանգում:

Գանձակի գաւառում այն գումարը, մօտաւորապէս 15—100 բուրլի, որ տղի հայրը վճարում է աղջկայ հօրը, կոչւում է երեսջուր կամ մի շատ բնորոշ խօսքով պետքնարի փող, որովհետեւ այդ գումարի մի մասը ծախսում է հարսնացուի օժիտի՝ բաժինքի վրայ²⁾։

Զաւախթում հարսի օժիտը պատրաստում է հաղեմասու, սաշուի եւ երեստեսանքի փողներով։ Աղջկայ հայրը ոչ միայն իրենից ոշինչ չի վճարում, այլ և այդ փողերից աշխատում է գողանալ³⁾։

Վերոյիշեալ երկու օրինակներից պարզ հետեւում է, որ գլխազնի փողերի մի մասը յատկացւում է օժիտի համար և դատում հարսնացուի անձնական սեփականութիւն։

Զանգեզուրում, երբ խնամախօսներն ու պատգամները սակարկում են և որոշում, թէ որքան պէսք է տղայի հայրը վճարի, միևնուն ժամանակ որոշում են, ՚ի հարկէ

¹⁾ М. Ковалевский—Древний законъ и современный обычай, т.-I, стр. 248.

²⁾ Ե. Լալայեան—Գանձակի գաւառ, եր. 22.

³⁾ Նոյն—Զաւախթ, եր. 151.

գլխազնի համեմատ, թէ բնչ օժիտ պիտի տայ աղջկայ հայրը։ Սակայն զիխազնի գումարը հետզնեւմէ զդալի կերպով փոքրանում է և ընդհակառակին մեծանում է օժիտի գումարը։ Մի քանի զիւղերում զիխազնի սովորութիւնը սկսել է բոլորովին վերանալու նոյն իսկ պատահում է, որ երիտասարդ փեսացուները, առաւելապէս օտար մեծ քաղաքներում արգէն եղածները, իրենք են աղջկայ հօրից փող պահանջում, բայց շատ քչերն են համաձայնում տալ¹⁾։

Նոյնն է կատարուում Վարանդայում, որտեղ զիխազնի քանակը սրոշելուց յետոյ, փեսացուի կողմն է ձայն բարձրացնում և պահանջում է օժիտ, որ չափուում է տղայի կողմից տուած զիխազնի գումարի քանակով²⁾։

Վերջին երկու օրինակներից կարելի է տեսնել, որ շատ գաւառներում օժիտը դարձել է արգէն մի անհրաժեշտ պահանջ, յետ մզելով զիխազնի տալու սովորութիւնը, որ յիրաւի այգափխի տեղերում սկսում է վերանալ և դառնալ մի մեռած ծէս, հոգեարքի մէջ ընկած մի սովորութիւն։ և ընդհակառակն՝ այն գաւառներում, որտեղ ինչպէս օրինակ՝ Սրբանում, բաշլղ կտրելու կամ զիխազնի սովորութիւնը ծաղկում է խիստ պահպանողութեամբ, այն-աեղ օժիտի սովորութիւնը միանգամայն բացակայում է։

Այսպէս ուրեմն առաջ բերած համեմատական փաստերից եզրակացւում է այն կարծիքը, որ մենք այս զիխի սկզբում յայտնել էինք. զիխազնի գումարը, որ սկզբներում անցնում էր աղջկայ հօր (ընտանիքի) ձեռքը, աստիճանական զարգացմամբ փոխարկւում է օժիտի։ Աղջկայ հայրը փեսացուից ստացած գումարը փոխանակ իրեն սեփականութիւն դարձնելու, գործազրում էր յօգուտ հարմացուի, որի համար պատրաստում էր պահանջելի օժիտը։

¹⁾ Եր. Լարայեան—Զանգեզուր Բ. հատ. եր. 72.

²⁾ Նոյն—Վարանդայ, եր, 127.

կարծում ենք, որ բոլոր վերլուծած նիւթերը, որոնք դրուած էին ներկայ յօդուածով ընթերցողների առաջ, միանգամայն բաւական են հաստատելու այն փաստը, որ հարսի առևանգումն և զնումն հայ սովորութական իրաւունքի մէջ մի ժամանակ գերակշռող տեղ էր բռնում ամուսնական հարցում։ Այժմս, ինչպէս տեսնում ենք, առևանգումը խօսառ վերացել և կորցրել է իւր նշանակութիւնն իրեւ դրական սովորոյթ, բայց հարսի զնումը տակաւին պահպանում է իւր գոյութիւնը տեղ տեղ կամ ամրողովին կամ վերափոխուած ձևերով։ Յամենայն դէպս այսօր չքանալու վրայ է ամուսնութեան միջոցի և այդ վերջին մասցրդը։ Այլապէս չի էլ կարող լինել Առեանգումն և ապա զնումը կարող են պահպանուել ու ծագկել իրենց բնաւորութեան համաձայն պայմաններում։ Այնտեղ, ուր սոցիալ-կուլտուրական գարգացումը կանդնած է սոոր աստիճանի վրայ, ուր իրաւաբանական յարաբերութիւնները հիմնուած են միանգամայն ուրիշ սկզբունքների վրայ, քան թէ մեր ժամանակներում, այնտեղ խօսք չի կարող լինել ամուսնութեան այն եղանակների մասին, որոնք արդի քաղաքակրթուած հասարակութիւնների բաժինն են կազմում։ Ընթերցողն անցուշտ նկատած կրյինի բոլոր վեր յիշած օրինակներից, թէ ժողովուրդն ինչ հայեացք ունի կնոջ նշանակութեան ու նրա իրաւաբանական դրութեան վրայ։ Կինը զուրկ է ակտիւ իրաւունքներից, նրա գոյութիւնն, իրեւ իրաւանց անծնառորութեան, հայ սովորութական իրաւունքը բնաւ չի ընդունում։ Հայ կինը կարծես իրաւանց առարկայի շարքն է գաստած։ Ուստի պարզ է, որ այդպիսի հայեացքների համեմատ էին վարուելու իգական սեռի հետ։ Վերցնենք օրինակի համար հարսի զնումը, որ ինչպէս ասել ենք, տեղ-տեղ տակաւին անարատ պահպանուել է։ Գնումը, իրաւաբանական տեսակէտից նայած, այստեղ հանդէս է գալիս իրեւ ընչական յարաբերութիւններից բըդիսած մի գաշինք, որտեղ մի կողմը՝ աղջկայ ընտանիքը շահագրգռուած է նրանով, որ զիջանում է միւս կողմին՝

փեսացուին իրենց աշխատաւոր ձեռքերից մէկը։ Ակներն է, որ այսպիսի դէպքում մի կողմը պահանջում է վարձատրութիւն, իսկ հակառակ կողմը դորա փոխարէն ձեռք է բերում մի նոր աշխատաւոր անգամ։

Կնոջ այդ տեսակ իրաւարանական դրութիւնը մանաւանդ բացայացած է գառնում ընտական անտեսութեան տիրապետութեան շրջանում։ Տնտեսական պայմանների զարգացմամբ փոփոխւում են և իրաւարանական յարաբերութիւնները, կինը կամաց կամաց կորցնում է իւր նշանակութիւնն իրեւ իրաւանց առարկայի, և հասարակական աշխարհայեացքի մէջ աստիճանաբար ճանապարհ է հարթում այն գաղափարը, թէ կինն էլ կարող է իրաւանց անձն գառնալ և որ իսկապէս դառնում է։ Բնական անտեսութեան շրջամարտ, նրա աւելակներից վրայ բարձրանում է իրաւարանական յարաբերութիւնների մի նոր շնչար, ուր չեն կարող տեղ ունենալ անախրօնիզմ գարձած սովորութիւնները, այլ ընդհակառակին ծնունդ են առնում ներկայ պայմաններին յատուկ անձնական իրաւունքներ։

